Azg
armenian daily
14 ՓԵՏՐՈՒԱՐ 1998 ՇԱԲԱԹ # 24 (1527)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Նախագահական 9-յակ. 8 տղամարդ եւ 1 կին, առայժմ

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 13-ի դրությամբ Հայաստանի նախագահի պաշտոնին հավակնում են 9 թեկնածուներ Ռոբերտ Քոչարյանը (վարչապետ, նախագահի պաշտոնակատար), Վազգեն Մանուկյանը (Ազգային ժողովի պատգամավոր, Ազգային ժողովրդավարական միության նախագահ), Սերգեյ Բաղալյանը (Ազգային ժողովի պատգամավոր, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար), Պարույր Հայրիկյանը (Ազգային ժողովի պատգամավոր, «Ինքնորոշում» միավորման նախագահ), Արամ Սարգսյանը (Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ), Լյուդմիլա Հարությունյանը (պրոֆեսոր, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ), Դավիթ Շահնազարյանը (Ազգային ժողովի պատգամավոր), Կարեն Դեմիրճյանը («Հայէլեկտրամեքենա» ԲԸ տնօրեն, Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախկին (1974-1988) առաջին քարտուղար) եւ... Վիգեն Խաչատրյանը (Ազգային ժողովի պատգամավոր, լիբերալ-դեմոկրատական կուսակցության նախագահ):

ԱՍՈՒԼԻՍ

Գլխավոր դատախազը չի բացառում նախկին իշխանությունների կապը հանցագործ խմբերի հետ

Երեկ հանրապետության դատախազ Հենրիկ Խաչատրյանի հանդիպումը լրագրողների հետ ուղեկցվում էր խաբված ավանդատուների աղաղակներով, որոնք հերթական անգամ պահանջում էին ժամանակին պահ տված գումարները: Ուստիեւ դատախազը հարկ համարեց ասուլիսը սկսել այդ հիմնախնդրից, նշելով, որ հարցն ամենեւին դատախազության խնդիրը չէ, թեպետ իրավասության շրջանակներում հնարավորին լուծում կստանա:

Այնուհետեւ անկեղծորեն նկատեց, որ դատախազության աշխատանքը շատ հեռու է լավ լինելուց, ինչը օրենսդրական բազայի բացակայությամբ է պայմանավորված, միաժամանակ ակնկալելով, որ համապատասխան օրենքի ընդունմամբ կկատարվեն կառուցվածքային եւ կադրային արմատական փոփոխություններ:

Հակիրճ ամփոփելով տարին, նկատեց, որ քաղաքական իրավիճակի որոշակի բարդությունները բացասական առումով ազդում են քրեածին իրավիճակի վրա, բայց 98-ի հունվարը համեմատելով անցյալ տարվա նույն ժամանակահատվածի հետ, նշեց, որ կատարված հանցագործությունները նվազել են 115 դեպքով: Դատախազը ցավով նկատեց, որ լրագրողների ուշադրությունից անտեսվում են ինքնասպանության դեպքերը, եւ խոր անհանգստություն հայտնեց ինքնասպանության թվածի վերաբերյալ: 1995-ին կատարվել է 210 ինքնասպանություն, 96-ին 230, 97-ին 245, իսկ ինքնասպանության փորձեր 95-ին 139, 96-ին 159, 97-ին 148: Ինքնասպանության հիմնական դրդապատճառը եկամտի մշտական աղբյուրի բացակայությունն է:

Հարցուպատասխանի ընթացքում, կրկին խոսելով տնտեսական հանցագործություններից, տեղեկացրեց, որ ներկայումս վարույթում է 2 գործ, որոնցից 1 մլն 300 հազար դոլար է վերականգնվել, բայց գործը չի կարճվելու, քանի որ կատարվել է վտանգավոր հանցագործություն:

Տես էջ 8

Վահան Թեքեյանի աճյունը կամփոփվի Երեւանի պանթեոնում

ԵՐԵՎԱՆ, 13 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Առաջիկա նարիլին Երեւանում նշվելու է Թեքեյան մշակութային միության 50-ամյակը, որին նվիրված հանդիսությունը փաստորեն եզրափակելու է արտասահմանում կայացած տոնախմբությունների շարքը:

Այս մասին ասաց Հայաստանի Թեքեյան մշակութային միության նախագահ, ակադեմիկոս Լեւոն Մկրտչյանը, ավելացնելով, որ հանդիսություններին արտասահմանի տարբեր հայկական գաղթօջախներից ԱՄՆ, Անգլիա, Կանադա, ժամանելու է մոտ 200 մարդ:

Շրագրված է նաեւ այդ օրերին Եգիպտոսից Հայաստան բերել Վահան Թեքեյանի աճյունը եւ հողին հանձնել Երեւանի Կոմիտասի անվան այգու պանթեոնում:

ՀՈԱԿ-ը իր թեկնածուն կհայտարարի երկուշաբթի օրը

ԵՐԵՎԱՆ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եկող երկուշաբթի փետրվարի 16-ին, տեղի կունենա Հայաստանի Համակավար ազատական կուսակցության համագումարը, որը վերջնական պատասխան կտա նախագահական ընտրություններում այս կուսակցության ունենալիք դիրքորոշման հարցին:

Ինչպես Արմենպրեսի թղթակցին հայտնեց ՀՈԱԿ Հանրապետական վարչության ատենապետ Հարություն Կարապետյանը, իրենց վարչությունում նախնական քննարկումներ արդեն եղել են: «Մեր կուսակցությունը, ունի եւ փորձ, եւ արժանի անդամներ թեկնածություն առաջադրելու համար, բայց մեր քննարկումները բերեցին այն մտքին, որ ՀՈԱԿ-ը կզիջի իր կուսակցական շահերը, եթե ի հայտ գա միավորող, կոնսոլիդացնող թեկնածու, նշեց ատենապետը, քանի որ նախագահական ընտրությունները միշտ ազգը պառակտելու, ճամբարների բաժանելու վտանգ են պարունակում»:

Իսկ կոնկրետ թեկնածուներից որեւէ մեկին այդ առումով նախապատվություն տալու հարցին ի պատասխան պրն Կարապետյանը ասաց, որ իրենք ստորագրել են այն հայտարարությունը, որով առայժմ պատրաստակամություն են հայտնում աջակցել ՀՀ վարչապետին ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու հարցում: «Իսկ մնացածը համագումարը ցույց կտա»:

Սիրադեղյանը հրաժարվեց խմբակցության ղեկավարի պաշտոնից

Ինչպես հայտնի է, փետրվարի 12-ին տեղի է ունեցել ԱԺ «Հանրապետություն» խմբակցության նիստը, որ եւ ընդունվել է ԱԺ պատգամավոր Վանո Սիրադեղյանի հրաժարականը խմբակցության ղեկավարի պաշտոնից: Խմբակցության նոր նախագահ է ընտրվել ՀՀՇ վարչության անդամ Բաբկեն Ուրարտյանը:

Ստեղծված պայմաններում «Շամիրամ» պատգամավորական խմբակցությունը ստիպված եղավ որոնել նոր ջուր նոր այգիներ տնկելու համար: Որոնումները նրան հասցրեցին ՀՀ կառավարություն, որտեղ եւ փետրվարի 13-ին խմբակցության անդամներին ընդունեց Ռոբերտ Քոչարյանը: Վարչապետի այն միտքը, որ «վիճակը վատ էր, որովհետեւ վատ էինք աշխատում», կանայք ընկալեցին ըմբռնումով:

Ալիեւը Թուրքիայում

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ-ՍՅՈՒՏԻՅՈՒՆ: Նախագահ Դեմիրելի հրավերով փետրվարի 13-ին սկսվել է Ալիեւի երկօրյա պաշտոնական այցը Թուրքիայում: Քննարկվելու է ադրբեջանական նավթը Թուրքիայի տարածքով տեղափոխելու հարցը: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի, Ալիեւը մտադիր է քննարկել այն իրադրությունը, որը ստեղծվել է Անդրկովկասում Հայաստանի նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարականից եւ Վրաստանի նախագահ Շեւարդնաձեի վրա կատարված մահափորձից հետո:

Ռադուեւը սպառնում է Շեւարդնաձեին եւ ամբողջ աշխարհին

ՄՈՍԿՎԱ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՓՐԵՍ ՆՅՈՒՍ-ԻՆՏԵՐՖԱ�քՍ: Չեչնիայի դաշտային հրամանատար Սալման Ռադուեւը, որն ստանձնել է փետրվարի 9-ին Վրաստանի նախագահ էդուարդ Շեւարդնաձեի դեմ կատարված մահափորձի պատասխանատվությունը, հինգշաբթի օրը Գրոզնիում իրեն պատկանող «Մարշ» հեռուստաալիքով հայտարարել է, թե «Կովկասի ազատության մարտիկները ելցինին էլ հարված կհասցնեն Կարմիր հրապարակում, եթե նա շարունակի պաշտպանել Շեւարդնաձեի հանցախմբին»: Դաշտային հրամանատարը «Շեւարդնաձեին եւ նրա խունտային» նախազգուշացրել է, որ պատահածը իրեն ծաղկաբույլ կթվա, եթե Թբիլիսիի կենտրոնում «իդեալականորեն իրականացված» գործողությունից հետո նա (Վրաստանի նախագահը) սկսի հետաքրքրել ազատագրական ուժերի ներկայացուցիչներին: Ռադուեւը հաղորդել է, թե շատ չի տխրել, որ գործողության հիմնական նպատակը՝ վրաց ղեկավարի սպանությունը, չիրականացավ:

«Շգոհվեց եւ չմեռավ, սարսափելի ոչինչ չկա, ասել է Ս. Ռադուեւը, Շեւարդնաձեի նման վիճակը մեզ ծեռնտու է: Նա այժմ միշտ կսպասի հաջորդ հարվածին: Իսկ մահվան սպասելու վիճակը բուն մահվանից էլ վատ է»:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Կարեն Դեմիրճյանը հանում է հարցականները

Հին գվարդիան նորի՞ց նույն կազմով

«Ազգի» երեկվա համարում, հարցական երանգով, տեղ էր գտել մեր տեղեկատվությունը, Հայաստանի կոմկուսի կենտկոմի նախկին առաջին քարտուղար եւ այժմ «Հայէլեկտրամեքենա» գործարանի գլխավոր տնօրեն Կարեն Դեմիրճյանի նախագահական թեկնածության առաջադրման մասին: Երեկ փորձեցինք հենց իրենից ստանալ հերքում կամ հաստատում: Նա ծիծաղեց, ասելով, «է, այսօր արդեն գրել եք»: Մեր խոսքին, թե գրվածը հարցականի տակ է առնված, հաջորդեց Կարեն Դեմիրճյանի լակոնիկ պատասխանը, «Այո, առաջադրվում եմ: Կարող եք հանել հարցականները»: Այլ մանրամասնություններ նա չհայտնեց:

Առաջադրման որոշումը Կարեն Դեմիրճյանը ընդունել է փետրվարի 12-ին: «Նոյյան տապանի» հաղորդագրության համաձայն, Հայաստանի սոցիալիստական կուսակցության հիմնադիր-նախագահ Մովսես Շահվերդյանը նշել է, որ Կարեն Դեմիրճյանի թեկնածությունը կառաջադրվի կամ սոցիալիստական կուսակցության կողմից, կամ քաղաքացիական նախաձեռնության կարգով:

Կարեն Սերոբի Դեմիրճյանը Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնն զբաղեցրել է 1974-88 թթ.: Պրն Դեմիրճյանը «Հայէլեկտրամեքենա» գործարանի տնօրենն է 1991-ից:

Ծնվել է 1932-ին, Երեւանում: Ամուսնացած է, ունի երկու որդի եւ երկու թոռնուհի:

Այս հարցում թերեւս ինչ-որ բան է հուշում «Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի» կեցվածքը: Խորհուրդ, որ ներառում է շուրջ 30 երիտասարդական հասարակական կազմակերպություններ եւ ուսանողական ենթախորհուրդներ:

Երեկ վարչապետ Ռոբերտ Քոչարյանն ընդունել է խորհրդի նախագահության անդամներին եւ ողջունել երկրի համար կարեւորագույն խնդիրների լուծմանը մասնակցելու նրանց վճռականությունը: Այսօր «Հայաստանի երիտասարդության ազգային խորհուրդը» հրավիրում է մամուլի ասուլիս, ուր եւ նախատեսում է իր աջակցությունը հայտնել նախագահական թեկնածուներից մեկին: Ենթադրվում է, որ այդ թեկնածուն լինելու է հենց Կարեն Դեմիրճյանը, որը, ինչպես հայտնի է, նաեւ ճարտարագիտական համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Ենթադրվում է, որ շուրջ 30 երիտասարդական կազմակերպություններ կազմելու են Կարեն Դեմիրճյանի ընտրարշավի «երիտասարդական թեւը»:

Ա. Պ.

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

Ըստ դեսպան Շուգարյանի, եռանախագահնե՛րը պետք է փոխեն իրենց քաղաքականությունը

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Պատասխանելով «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի թղթակցի հարցին, թե Ղարաբաղի հարցում ի՞նչ փոփոխություններ են սպասվում Հայաստանի քաղաքականության մեջ, ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Ուլբեն Շուգարյանն ասել է. «Մեր ԱԳՆ-ն արել է շատ հստակ հայտարարություն: Պարզ է, որ Հայաստանի դիրքը լինելու է ավելի կոշտ, բայց դա դեռ չի նշանակում, որ մենք դուրս կգանք Մինսկի գործընթացից: Ինչ վերաբերում է քաղաքականության փոփոխությանը, ապա ոչ թե Հայաստանը, այլ, ըստ իս, միջազգային հանրությունը եւ հստակապես եռանախագահները պետք է մտածեն իրենց քաղաքականությունը փոխելու մասին, որովհետեւ այդ քաղաքականությունն արդյունքներ չտվեց»:

Շուգարյանը նշել է, որ 1998 թ. բյուջեում Քլինթոնի վարչակազմը Հայաստանի համար նախատեսել էր 80 մլն դոլարի օգնություն եւ ոչ մի խոսք չէր եղել Ղարաբաղին օգնելու մասին, սակայն Կոնգրեսը որոշեց Հայաստանի համար 87,5 մլն դոլար, իսկ Ղարաբաղին 12,5 մլն դոլար հատկացնել: 1999 թ. համար դարձյալ նախատեսված է Հայաստանին 80 մլն դոլար, բայց վերջնական որոշումը դարձյալ պետք է կայացնի Կոնգրեսը: «Մենք բավականին հաջող ավարտեցինք այս տարին, որովհետեւ եւ Հայաստանը, եւ Ղարաբաղը ստացան դրամական օժանդակություն: Այս տարի էլ մենք շատ անելիքներ ունենք: Մեծ անելիքներ ունի նաեւ ամերիկահայ համայնքը: Մեր համայնքը մրցակցում է տարբեր ուղղերի, հատկապես նավթային ընկերությունների հետ, եւ պետք է հուսալ, որ այս տարի էլ մենք հաջողությունների կհասնենք»:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

«Տեղի ունեցավ այն, ինչ անխուսափելիորեն պետք է տեղի ունենար: ՀՅԴ-ն առաջինն էր այն քաղաքական ուժերի շարքում, որոնք 1991-ին պնդում էին, թե Լևոն Տեր-Պետրոսյանը եւ նրա ստեղծվելիք ռեժիմը Հայաստանը կտանեն սխալ ճանապարհով: Բնականաբար հետո, տարիների ընթացքում, Հայաստանում ձեւավորվեց հզոր ընդդիմադիր դաշտ տարբեր տեսակետներ, տարբեր դավանանք, տարբեր մոտեցումներ ունեցող կուսակցությունների, եւ այդ ընդդիմության համատեղ պայքարն ի վերջո բերեց դրական արդյունքների...

ՀԱՅՐԵՆԻՔ ԴՊՐՈՑ

Դաշնակները գերադասում են Քոչարյանի ուսերը

Մենք ինչ ասում էինք 1991-ին, այդպես էլ հիմա ենք ասում: Փոխվեցին մարդիկ, որոնք հասկացան, որ առանց ազգային գաղափարախոսության պետություն չի կառուցվում: Ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա չէ»: Սա այսպես երեկ՝ փետրվարի 13-ին, ժուռնալիստի տանը սկսեց իր խոսքը ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանը:

Ասուլիս, որն ընդամենը մեկ ամիս առաջ թվում էր աներեւակայելի եւ խոսանում էր դառնալ շաբաթվա եւ առավել եւս օրվա գլխավոր իրադարձությունը, երեկ արդեն դիտվում էր անցուդարձային հայտնի համակարգի սահմաններում, ուստիեւ սենսացիոն չէր: Հայաստանում այսօր չկա սենսացիա: Հետեւաբար կարելի է մի փոքր հոգարկել մեր ուրախությունը նաեւ Վահան Հովհաննիսյանի ազատության առթիվ (բնականաբար, հուսալով մյուս քաղբանտարկյալների արագ ազատումը) եւ խոսքը տրամադրել հենց իրեն. «Ճանապարհը բաց է հիմա: Մենք պետք է միմյանց վստահեցնենք, որ խաղախություն չլինի որեւէ ձեւով, որ ընտրությունները ընթանան իրոք նորմալ ճանապարհով. նախագահական ընտրությունները այս վերափոխումների ընդամենը մեկ փուլն են: Մի քաղաքական ուժ կարող է նախագահական ընտրությունները ամենից շատ կարեւորել, մյուսը՝ մեկ այլ փուլ, օրինակ, խորհրդարանական ընտրությունները»: Այս առումով Վահան Հովհաննիսյանը նշեց, որ մենք դեռ ոչ մի լավ բան չունենք, բացի լավ նախադրյալներից. «Մենք ունենք լավ սարեր, մենք ունենք լավ տրամքլին, որից կարող ենք կատարել ցատկ, եւ պետք է աշխատենք այդ ցատկի ժամանակ ոտքերը չկտրել»: Ըստ Վահան Հովհաննիսյանի, հաջողակ ցատկի երաշխիքը միայն եւ միայն ազատ եւ արդար ընտրություններն են: «Հիմա էլ մենք իշխանության նպատակ մեր առջեւ չենք դնում: Մենք հիմա վերջապես տեսնում ենք մեզ համար դաշտ զբաղվելու նրանով, ինչի համար ստեղծվել ենք: Մեզ միշտ այդ դաշտից շեղել են. մեկ թուրքը, մեկ ադրբեջանցիները, մեկ պատերազմը եւ այլն, եւ այլն: Իսկ մեր ուզած գործը հայ ժողովրդի մեջ նորմալ, առողջ քաղաքական մթնոլորտ ստեղծելն է: Այստեղ մենք ջանք չենք խնայի»:

Ինչ վերաբերում է ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի հայտնի դիրքորոշմանը ՀՀ վարչապետի թեկնածությանն աջակցելու կապակցությամբ, Վահան Հովհաննիսյանի կարծիքը հետեւյալն է. «1996-ին մեր ժողովրդի բոլոր առողջ ուժերը, այդ թվում եւ ՀՅԴ եւ ԱԺՄ-ն կանգնեցին կողք-կողքի, ուս-ուսի տված կռվեցին չարիքի դեմ: Պայքարն այն գործոնի դեմ էր, որը դեստրուկտիվ դեր էր խաղում Հայաստանի կյանքի բոլոր բնագավառներում:

ԱԺՄ-ն, ինձ համար, ՀՀ-ի քաղաքական ուժերի մեջ ամենահարգելի կազմակերպություններից մեկն է. Վազգեն Սանուկյանը ամենահարգելի քաղաքական գործիչներից եւ մարդկանցից մեկն է, ինձ համար ամենահամակրելի: Սակայն վերոհիշյալ գործոնից ազատվելուց հետո առաջանում է արդեն ընտրության լայն դաշտը: Մենք դառնում ենք պրագմատիկ, ռեալիստ մարդիկ: Մենք ստիպված ենք արձանագրել, որ ԱԺՄ-ի հետ ունենք բավական լուրջ գաղափարական տարաձայնություններ: Այդ մասին եւ մենք, եւ իրենք հայտարարում էինք բացեիբաց դեռ 1996-ին: Տնտեսական հարցերի վերաբերյալ տարաձայնություններից զատ, մեզ համար հիշ աղոտ է մնում ԱԺՄ-ի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի ճակատագրի նկատմամբ: Հատկապես դա ավելի նկատելի դարձավ: Բացի դրանից, մենք տեսնում ենք այսօրվա ռեալ Հայաստանը, որը ոչ թե անցունդի եզրին է կանգնած, այլ արդեն ընկել է ներքեւ: Այս հանգրվանում ո՞ւմ ուսերն են ամենից հարմար բեռը շալակելու համար, մենք քննարկեցինք ու գտանք Ռոբերտ Քոչարյանի»: Նա նշեց, որ անկախ ամենից ՀՅԴ-ն եւ ԱԺՄ-ն մնում են լավագույն հարաբերությունների մեջ, վստահություն հայտնելով, որ Վազգեն Սանուկյանի հաղթանակի դեպքում Հայաստանը այլեւս չի վերադառնա այն ադեսալի վիճակին, որը կար: Միեւնույն ժամանակ, Վահան Հովհաննիսյանը խոստովանեց, որ «պրոգրեսն ավելի ցայտուն դարձնելու համար այսօր ավելի նպատակահարմար է նախագահ ընտրել Ռոբերտ Քոչարյանին»:

Ընդհանուր առմամբ Վահան Հովհաննիսյանի ասուլիսը թվում էր փիչ վաղաժամ: Շատ հարցերի նա պատասխան չէր պատասխանելու ըստ էության: Հետեւողականություն չկար Ռոբերտ Քոչարյանի թեկնածության առաջադրման իրավական հնարավորությանն առնչվող պատասխանում: Խոսելով այդպիսի հնարավորության մասին, նա չնշեց ոչ մի հեռանկար: Նույն սկզբունքով մասնակցելո՞ւ է Ղարաբաղի բնակչությունը ՀՀ նախագահական ընտրություններին:

Այլ հարցերի կապակցությամբ Վահան Հովհաննիսյանը մասնավորապես ասաց. «Եթե երկրորդ փուլ դուրս գան երկու թեկնածուներ, որոնցից մեկը մեր թեկնածուն չէ, եւ կոմունիստը կա այնտեղ, ապա կոմունիստը մեզ համար բացառված է»:

Կարեն Դեմիրճյանի թեկնածության առաջադրման վերաբերյալ Վահան Հովհաննիսյանը, չգիտես ինչու, որոշեց, որ Սահմանադրությունում կա տարիքային վերին սահմանափակում, որը եւ զրկում է Խորհրդային Հայաստանի առաջնորդին նման հնարավորությունից: Մինչդեռ հենց ասուլիսի ժամանակ արդեն հայտնի էր Կարեն Դեմիրճյանի թեկնածության առաջադրման հանգամանքը, իսկ Սահմանադրությունը նման վերին տարիքային ցենզ չունի:

ԱԲԻՍ ՂԱՋԻՆՅԱՆ

ԼՂՀ

Արցախի տաճարները ավետում են ազատության հաղթանակը

Փետրվարի 13-ին Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը Շուշիի Կանաչ ժամ (Ս. Հովհաննես Մկրտիչ) եկեղեցում կատարեց հատուկ մաղթանքներ առ աստված: Արցախի ազատագրական պայքարի 10-րդ տարելիցի կապակցությամբ այդ օրը ԼՂՀ տարածքում գտնվող բոլոր եկեղեցիներում դողանջեցին զանգեր, կատարվեցին հատուկ մաղթանքներ, ինչը կշարունակվի մինչեւ փետրվարի 19-ը: Ինչպես տեղեկացրին Շուշիից, Արցախի տաճարների դողանջները կավետեն աշխարհին հայրենիքի ազատության հաղթանակը, կարբնացնեն հիշողությունը նրանց մասին, ովքեր իրենց կյանքը նվիրեցին հայության իրավունքների համար: Ինչպես հայտնի է, մինչ այդ Պարգեւ սրբազանը դիմել էր աշխարհի բոլոր պատրիարքներին, թեմական առաջնորդներին, ծխական եւ վանական գլուխներին՝ կոչ անելով միանալ արցախահայությանը իրենց աղոթքներով եւ զանգերի դողանջներով:

ԼՂՀ-ում ծնունդները նվազել են

Ինչպես «Ազգի» թղթակցին տեղեկացրին ԼՂՀ մայրաքաղաքի ծննդատնից, 1997 թվականին ծննդատանը գրանցվել է 989 նորածին, որոնցից 535-ը՝ տղա: Ծնունդներից 278-ը ԼՂՀ շրջաններից են: Նույն աղբյուրի համաձայն ցուցանիշը աննշանակալիորեն նվազել է:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ
Ստեփանակերտ

«Միդլենդ-Արմենիայի» բարեսիրական ձեռնարկումը

«Միդլենդ-Արմենիա» բանկը հիմնադրման օրից ի վեր սանձնել է Նուբարաշենի մանկատան հովանավորությունը: 7-23 տարեկան 136 մսավոր հետամնաց սաների խնամող այս հաստատությունը, որ ժամանակ առ ժամանակ արժանանում է այս կամ այն կազմակերպության ուշադրությանը, մշտական այլ հովանավորներ չունի: «Միդլենդը» հանգանակությամբ եւ աշխատակիցների միջոցով հավաքած զգալի գումար (3,5 հազար դոլար) է տրամադրել 97-98 թթ. ձմեռային սեզոնի ջեռուցման եւ էլեկտրաէներգիայի ծախսերը հոգալու համար: Նախորդ ձմեռ բանկը հատկացրել էր 4,5 հազար դոլար ջեռուցման խառնուրդի տեղադրման, անկողնային սպիտակեղեն գնելու եւ էլեկտրաէներգիայի դիմաց վճարելու համար:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Երեկ «Միդլենդ-Արմենիայի» գործադիր տնօրեն Ջերեմի Հանքը եւ բանկի մի շարք աշխատակիցներ խաղողավենիք եւ նվերներ (գրքեր, մատիտներ, նկարագրման գրքույկներ) տարան մանկատան երեխաներին: Թերեւս կարելի է վիճարկել մանկատան աշխատակիցների նախապես արված այն հայտարարությունը, թե գերադասելի է կրտսեր խմբերի երեխաներին նվերներ տալ ուտելիքի փոխարեն, քանի որ շատերն անգիտակցաբար չափազանց ուտելով կարող են իրենց վնասել: Երեխաները շատ ուշադիր էին իրենց ընծաների նկատմամբ եւ շատ լավ պատկերացնում էին, որ հարկավոր է դրանք դնել այնպիսի տեղում, որտեղ ուրիշների ձեռքերը չհասնեն: Չէի ուզենա վիրավորած լինել նվիրված մարդկանց, բայց գաղտնիք չէ, որ նման շատ հաստատություններում այդպիսի դեպքերը բացառված չեն: Ասել, թե նվազագույն վարձավճարով աշխատողները ստիպված են դիմել այդօրինակ քայլերի՝ մարդկային ընկալումներից դուրս է: Նման աշխատանք անցնողները պետք է մեծ սիրտ ունենան, որպեսզի նոր դասագրքերի տպագրության համար): Այդպես շարունակվելու դեպքում պետությունը կազատվի դասագիրք տպագրելու հոգսից, գոհունակությամբ արձանագրեց նախարարը՝ ներկայացնելով հայ-ֆրանսիական համագործակցության այլ ծրագրերի, մասնավորապես, «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպության հետ համատեղ իրականացվող ձեռնարկումները:

Յունիսեֆի հայաստանյան գրասենյակի տնօրեն Ջոան վան Գերբենը եւ դեսպան Միշել Լեգրանը, ի պատասխան նախարարի երախտիքի խոսքի, կարեւորեցին կրտսեր դպրոցը դասագրքերով ապահովելու խնդիրը հետագա համագործակցության պատրաստակամություն հայտնելով:

Լ. Պ.

«Մայրենի 1»-ը՝ Հայաստանի եւ Արցախի դպրոցներում

Երեկ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունում տեղի ունեցավ «այս տարվա առաջին ուրախալի իրադարձությունը» (նախարար Արշաքես Պետրոսյանի խոսքերն են). Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրանի, դեսպանության մշակութային կցորդի, Յունիսեֆի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների, հրատարակիչների, լրագրողների ներկայությամբ կայացավ 1-ին դասարանի «Մայրենիի» շնորհանդեսը: Դասագիրքը հրատարակել է «Լույս» հրատարակչությունը ՍՍԿ-ի հայկական հիմնադրամի (Յունիսեֆի) հովանավորությամբ եւ Յունիսեֆի Ֆրանսիայի Ազգային կոմիտեի աջակցությամբ. հեղինակներն են Ջուլիետա Գյուլամիրյանը եւ Լարիսա Մարտիրոսյանը:

Պրն Պետրոսյանը հայտնեց, որ դասագրքի հրատարակությունն սկսվել է հունվարի 15-ից եւ իրագործվել «ռեկորդային ժամկետներում», 74 հազար տպաքանակով, որ արդեն իսկ բաշխվել է Հայաստանի եւ Արցախի դպրոցներում եւ աշակերտներին կհանձնվի վարձակալական համակարգի միջոցով: Վերջինս «ամբողջովին աշխատել է Հայաստանում», եւ Համաշխարհային բանկը մտադիր է այդ փորձը կիրառել նաեւ ԱՊՀ մյուս երկրներում: Առ այսօր վարձակալական վճարների ձեւով հավաքվել է 210 հազար դոլարին համարժեք գումար, որ կուտակված է դպրոցների «Միդլենդ Արմենիա» բանկում բացված անհատական հաշիվներում եւ կազմում է նախատեսված գումարների 96 տոկոսը 90-ի փոխարեն (անապահով ընտանիքների համար «թողնված» 10 տոկոսը լրացնելու էին մարզպետարանները): (Հիշեցնենք, որ 4 տարվա ընթացքում կուտակված գումարներն օգտագործվելու են նոր դասագրքերի տպագրության համար): Այդպես շարունակվելու դեպքում պետությունը կազատվի դասագիրք տպագրելու հոգսից, գոհունակությամբ արձանագրեց նախարարը՝ ներկայացնելով հայ-ֆրանսիական համագործակցության այլ ծրագրերի, մասնավորապես, «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպության հետ համատեղ իրականացվող ձեռնարկումները:

Յունիսեֆի հայաստանյան գրասենյակի տնօրեն Ջոան վան Գերբենը եւ դեսպան Միշել Լեգրանը, ի պատասխան նախարարի երախտիքի խոսքի, կարեւորեցին կրտսեր դպրոցը դասագրքերով ապահովելու խնդիրը հետագա համագործակցության պատրաստակամություն հայտնելով:

Լ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տալիս
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր հրատարակություն պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՏ

Ամուլի ազգային ակումբը, Իրավագետների եւ քաղաքագետների միությունը փետրվարի 13-ին ՀՀ ԳԱԱ-ում հրավիրել էին «Հայաստանը եւ ընտրությունները» ծրագրի շրջանակներում 2-րդ քննարկումը, որի թեման էր «Ընտրությունների թափանցիկությունը եւ վերահսկելիությունը ՀՀ նախագահի ընտրության մասին ՀՀ օրենքի հիմքի վրա»: Հանդիպմանը մասնակցում էին ԱԺ նախագահը, դատգամավորներ, ՍԴ-ի անդամ ներկայացուցիչներ, լրագրողներ, քաղաքական կուսակցությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկմանն աջակցել էր Ընտրական համակարգերի միջազգային հասատությունը (IFES):

Քննարկման հրատարակությունն ավելի քան ակնհայտ էր՝ 31 օր հետո ՀՀ նախագահի ընտրություններն են: Ողջունելով քննարկման մասնակիցներին՝ ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը նկատեց, որ այսօրինակ նախաձեռնությունները կնպաստեն հանրապետությունում առաջիկա ընտրությունների հանդեպ քաղաքացիական դատասխանատվության մթնոլորտի ստեղծմանը: Կարեւորելով ազատ եւ արդար ընտրությունների անցկացման սկզբունքները՝ ԱԺ նախագահն ընդգծեց, որ ընտրությունների արդյունքում Հայաստանը պետք է ձեռք բերի ժողովրդավարական երկրի համար եւ աշխարհին ներկայանա որպես: այլ ոչ թե քիկունքով շրջվի նույն աշխարհից: «Ընտրելու իրավունքը քաղաքացու բնածին իրավունքն է, եթե այսօր ազատ ընտրությունների պահանջներ են ներ կայացվում, նշանակում է հայեւոր ընտրությունների արդյունքներն արժանահավաստ չեն եղել: «Ընտրությունների թափանցիկությունը բացառիկ կարեւորություն ունի», քանի որ «մենք դրա աղահովմամբ ապացուցում ենք, որ ընդունակ ենք զարգանալու»: Որպես ՀՀ նախագահի ընտրության մասին օրենքի համահեղինակ Հարությունյանը նշեց, որ այս ընտրություններում կարեւորը ոչ թե այն է, թե ո՞վ է ընտրվելու, այլ՝ ինչպե՞ս է ընտրվելու»:

Ընտրական համակարգերի միջազգային հասատությունը (IFES): դաշտում առկա դատեհապատաական դրսեւորումները Խաչատրյանը համարեց խիստ անցանկալի: (Ի՞նչ քաղցր է երգում–«Ա.») Թափանցիկ ու վերահսկելի պետք է լինեն հենց ընտրությունները եւ ոչ միայն քվեարկությունները: Ըստ Խաչատրյանի, թեկնածուները շահագրգռված են, որ ազատ եւ արդար ճանապարհով ընտրվեն, սակայն վստահ չեմ, որ «այն ուժերը, որոնք հնարավորություն ունեն աղդել ընտրողի վրա, կմնան չեզոք»:

ԿԸՀ նախագահ Խաչիկ Բեգիրջյանը տեղեկացրեց, որ այս ընտրությունների ընթացքում մարզային հանձնաժողովներում կդրվի ֆախի աղարաս, կօգտագործվի նաեւ Ինտերնետի կայքը: Բեգիրջյանը նկատեց, որ ընտրաբաշխի կարճ ժամանակահատվածը հնարավորություն չի տալիս օգտագործել գունավոր քվեաթերթիկների համակարգը, երբ նախընտրական թեկնածուի համար ընտրողը գցում է համադատասխան գրպանի կնիքներով:

ԻՄ-ի նախագահ Պարույր Հայրիկյանը նշեց, որ ազատ ընտրությունների երաշխիքը պետք է տա ոչ թե իշխանությունը, այլ օրենքը, ըստ այդմ «որքան արագ ժողովրդավարություն սովորենք, այնքան արագ ժողովրդավար կդառնանք»:

Դրամագետների եւ քաղաքագետների միության նախագահ, ԱԺ դատգամավոր Արթուր Բաղդասարյանը նկատեց, որ առաջիկա ընտրությունները կարեւոր փորձաքար կլինեն, իսկ այն քաղաքական գործիչները, որոնք այսօր վստահ չեն դատեհապատաական դրսեւորումներ Խաչատրյանը համարեց խիստ անցանկալի: (Ի՞նչ քաղցր է երգում–«Ա.») Թափանցիկ ու վերահսկելի պետք է լինեն հենց ընտրությունները եւ ոչ միայն քվեարկությունները: Ըստ Խաչատրյանի, թեկնածուները շահագրգռված են, որ ազատ եւ արդար ճանապարհով ընտրվեն, սակայն վստահ չեմ, որ «այն ուժերը, որոնք հնարավորություն ունեն աղդել ընտրողի վրա, կմնան չեզոք»:

ԿԸՀ նախագահ Խաչիկ Բեգիրջյանը տեղեկացրեց, որ այս ընտրությունների ընթացքում մարզային հանձնաժողովներում կդրվի ֆախի աղարաս, կօգտագործվի նաեւ Ինտերնետի կայքը: Բեգիրջյանը նկատեց, որ ընտրաբաշխի կարճ ժամանակահատվածը հնարավորություն չի տալիս օգտագործել գունավոր քվեաթերթիկների համակարգը, երբ նախընտրական թեկնածուի համար ընտրողը գցում է համադատասխան գրպանի կնիքներով:

ԻՄ-ի նախագահ Պարույր Հայրիկյանը նշեց, որ ազատ ընտրությունների երաշխիքը պետք է տա ոչ թե իշխանությունը, այլ օրենքը, ըստ այդմ «որքան արագ ժողովրդավարություն սովորենք, այնքան արագ ժողովրդավար կդառնանք»:

Դրամագետների եւ քաղաքագետների միության նախագահ, ԱԺ դատգամավոր Արթուր Բաղդասարյանը նկատեց, որ առաջիկա ընտրությունները կարեւոր փորձաքար կլինեն, իսկ այն քաղաքական գործիչները, որոնք այսօր վստահ չեն

Խաչատուր Բեգիրջյան

ոեւս իրական է, քանի որ մարզոտեները արդեն ցուցակներ են դահանջում, իսկ առաջիկայում ամենաքուրջ խնդիրը կլինի ուսադիրավոր մարդկանց միջամտությունը:

Սահմանադրական դատարանի անդամ Դիլլեն Թոդոյանը ասաց հայտնեց, որ ընտրությունները կանցնեն հին օրենքով, քանի որ ԱԺ-ն չհասցրեց ընդունել նորը: Թոխյանը կարեւորեց դատարանների դերը: Նա նկատեց, որ պետք է հետագայում այնպես անել, որ ԿԸՀ-ի անդամները պետք է լինեն իրավաբաններ, եւ նրան տրված այսօրվա մեծ լիազորությունները պետք է խիստ կրճատվեն, փաստորեն այն դառնում է ընտրություններում օրենսդիր մարմին:

ԻՄՔ-ի Աբովյանի մասնաճյուղի նախագահ Մկրտիչ Մուրադյանը դատեհապատաական դրսեւորումներ Խաչատրյանը համարեց խիստ անցանկալի: (Ի՞նչ քաղցր է երգում–«Ա.») Թափանցիկ ու վերահսկելի պետք է լինեն հենց ընտրությունները եւ ոչ միայն քվեարկությունները: Ըստ Խաչատրյանի, թեկնածուները շահագրգռված են, որ ազատ եւ արդար ճանապարհով ընտրվեն, սակայն վստահ չեմ, որ «այն ուժերը, որոնք հնարավորություն ունեն աղդել ընտրողի վրա, կմնան չեզոք»:

ԿԸՀ նախագահ Խաչիկ Բեգիրջյանը տեղեկացրեց, որ այս ընտրությունների ընթացքում մարզային հանձնաժողովներում կդրվի ֆախի աղարաս, կօգտագործվի նաեւ Ինտերնետի կայքը: Բեգիրջյանը նկատեց, որ ընտրաբաշխի կարճ ժամանակահատվածը հնարավորություն չի տալիս օգտագործել գունավոր քվեաթերթիկների համակարգը, երբ նախընտրական թեկնածուի համար ընտրողը գցում է համադատասխան գրպանի կնիքներով:

ԻՄ-ի նախագահ Պարույր Հայրիկյանը նշեց, որ ազատ ընտրությունների երաշխիքը պետք է տա ոչ թե իշխանությունը, այլ օրենքը, ըստ այդմ «որքան արագ ժողովրդավարություն սովորենք, այնքան արագ ժողովրդավար կդառնանք»:

Դրամագետների եւ քաղաքագետների միության նախագահ, ԱԺ դատգամավոր Արթուր Բաղդասարյանը նկատեց, որ առաջիկա ընտրությունները կարեւոր փորձաքար կլինեն, իսկ այն քաղաքական գործիչները, որոնք այսօր վստահ չեն

Քաղաքացիական դատասխանատվությունը եւ նախագահական ընտրությունները

Ընտրությունների հիմքում պետք է լինի ժողովրդի կամքի ազատ դրսեւորումը

մակարգերի միջազգային հասատությունը (IFES):

Քննարկման հրատարակությունն ավելի քան ակնհայտ էր՝ 31 օր հետո ՀՀ նախագահի ընտրություններն են: Ողջունելով քննարկման մասնակիցներին՝ ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը նկատեց, որ այսօրինակ նախաձեռնությունները կնպաստեն հանրապետությունում առաջիկա ընտրությունների հանդեպ քաղաքացիական դատասխանատվության մթնոլորտի ստեղծմանը: Կարեւորելով ազատ եւ արդար ընտրությունների անցկացման սկզբունքները՝ ԱԺ նախագահն ընդգծեց, որ ընտրությունների արդյունքում Հայաստանը պետք է ձեռք բերի ժողովրդավարական երկրի համար եւ աշխարհին ներկայանա որպես: այլ ոչ թե քիկունքով շրջվի նույն աշխարհից: «Ընտրելու իրավունքը քաղաքացու բնածին իրավունքն է, եթե այսօր ազատ ընտրությունների դատահանջներ են ներ կայացվում, նշանակում է հայեւոր ընտրությունների արդյունքներն արժանահավաստ չեն եղել: «Ընտրությունների թափանցիկությունը բացառիկ կարեւորություն ունի», քանի որ «մենք դրա աղահովմամբ ապացուցում ենք, որ ընդունակ ենք զարգանալու»: Որպես ՀՀ նախագահի ընտրության մասին օրենքի համահեղինակ Հարությունյանը նշեց, որ այս ընտրություններում կարեւորը ոչ թե այն է, թե ո՞վ է ընտրվելու, այլ՝ ինչպե՞ս է ընտրվելու»:

Ընտրական համակարգերի միջազգային հասատությունը (IFES):

Քննարկման հրատարակությունն ավելի քան ակնհայտ էր՝ 31 օր հետո ՀՀ նախագահի ընտրություններն են: Ողջունելով քննարկման մասնակիցներին՝ ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը նկատեց, որ այսօրինակ նախաձեռնությունները կնպաստեն հանրապետությունում առաջիկա ընտրությունների հանդեպ քաղաքացիական դատասխանատվության մթնոլորտի ստեղծմանը: Կարեւորելով ազատ եւ արդար ընտրությունների անցկացման սկզբունքները՝ ԱԺ նախագահն ընդգծեց, որ ընտրությունների արդյունքում Հայաստանը պետք է ձեռք բերի ժողովրդավարական երկրի համար եւ աշխարհին ներկայանա որպես: այլ ոչ թե քիկունքով շրջվի նույն աշխարհից: «Ընտրելու իրավունքը քաղաքացու բնածին իրավունքն է, եթե այսօր ազատ ընտրությունների դատահանջներ են ներ կայացվում, նշանակում է հայեւոր ընտրությունների արդյունքներն արժանահավաստ չեն եղել: «Ընտրությունների թափանցիկությունը բացառիկ կարեւորություն ունի», քանի որ «մենք դրա աղահովմամբ ապացուցում ենք, որ ընդունակ ենք զարգանալու»: Որպես ՀՀ նախագահի ընտրության մասին օրենքի համահեղինակ Հարությունյանը նշեց, որ այս ընտրություններում կարեւորը ոչ թե այն է, թե ո՞վ է ընտրվելու, այլ՝ ինչպե՞ս է ընտրվելու»:

Ընտրական համակարգերի մի-

Ներկայացրեց, որ Կոտայքում գրանցված 11 հասարակական կազմակերպություններ հանդես են եկել հայտարարությամբ, որով իրենք դարձյալ են համարում նպաստել ազատ եւ արդար ընտրությունների անցկացմանը:

Արամ Մայիլյանը (ԱԺՄ) նկատեց, որ նախագահական ընտրությունների մեկնարկը տրված է: Նախորդ նախագահական ընտրություններից հետո քաղաքական ուժերի դերը նվազեց, փոխարենը ակտիվացավ հասարակական կազմակերպությունների դերը, վկան՝ ընթացող քննարկումը: Այսօրինակ իրավիճակում, երբ հասարակությունը դատրաստակամություն է հայտնում հետեւել ընտրությունների անցկացմանը, անօրինական ընտրությունները դառնում են քիչ հավանական: Նա կարեւորեց նաեւ մամուլի եւ տեղեկատվության դերը:

Վերջում քննարկման կազմակերպիչները տեղեկացրեցին, որ ԿԸՀ-ում նախագահի թեկնածուների գրանցումից հետո ՀՀ ԳԱԱ-ի դահլիճում բոլոր թեկնածուները պետք է ստորագրեն հուշագիր, որ դարտավորվեն բոլոր ջանքերը ներդնելու ազատ եւ արդար ընտրությունների անցկացմանը:

Վերջում քննարկման մասնակիցները հայտարարություն ընդունեցին, ուր նշված է. «Հիմք ընդունելով քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների միջազգային չափանիշները, բոլորին կոչ ենք անում կյանքի կոչել հետեւյալ սկզբունքները եւ նպատակները. ա) ՀՀ-ն պետք է շարունակի ժողովրդավարական զարգացումները դավարական զարգացումները, բ) ժողովրդի ազատորեն եւ արդարորեն արտահայտված կամքը իշխանությունների լեգիտիմ գործունեության միակ հիմքն է, գ) ՀՀ բոլոր քաղաքացիները եւ կազմակերպությունները ամեն ջանք կգործադրեն, որ մարտի 16-ին կայանալիք նախագահական ընտրությունները արդար եւ բափանցիկ լինեն, իսկ նախագահական ընտրությունների հիմքում ընկած լինի ժողովրդի կամքի ազատ դրսեւորումը»:

ՆԱԲԻԼԵ ՄՈՒՐՏՈՅԱՆ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ»

Հակամարտությունը վերացել է

Գնում է Սուրեն Զոլյանը

Ժողովրդավարական քաղաքագիտական կենտրոնի եւ Էրերտի հիմնադրամի «Քաղաքացիական ֆորում 1998» ծրագրի անդրանիկ սեմինարը վերաբերում էր Հայաստանում ստեղծված քաղաքական իրավիճակին եւ հնարավոր զարգացումներին: Կենտրոնի ղեկավար Սուրեն Զոլյանը վերջին իրադարձություններում չբացառելով Արցախի դերը, առավել կարեւորեց քաղաքական եւ տնտեսական գործոնները՝ Տեր-Պետրոսյանի եւ «խմբի» հեռացումը դիտելով իբրեւ տրամաբանական հանգուցալուծում անհերթ, անառողջ իրավիճակի, երբ հասարակությունը շերտավորված էր 80 տոկոս աղքատների, 15 տոկոս միջին խավի եւ 5 տոկոս գերհարուստների, առաջացել էր կաթվածահար քաղաքական դաշտ, որտեղ կուսակցությունների գործունեությունն ինքնանպատակ էր դարձել, մասնավորապես արդար եւ ազատ ընտրությունների անհնարինության դատճառով: Գործադիր իշխանությունները խոշոր հարվածներ էին հասցրել ոչ միայն Դաշնակցությանը, այլեւ ՀՀՇ-ին, որից միշտ հեռանում էին ուժեղները: Քոչարյանը փաստորեն ընտրություն չուներ՝ կամ դիտի սերտաճեր 5 տոկոսին, կամ դայքարեր նրանց դեմ, եւ ընտրեց երկրորդը:

Ըստ դրն Զոլյանի, կուսակցություններն անդատրաստ էին վերջին զարգացումներին, եւ դատահական չէ, որ հասարակության քաղաքական տրամադրությունների արտահայտումը փորձում են ստանձնել նոր կազմակերպություններ «Ռուսաստան-Բելառուս»–Հայաստան միությունը դաշտդանող ժողովրդական նախաձեռնություն, մտավորականների վերջերս ստեղծված Ազգային խորհուրդ, ազգային-ազատագրական միություն: Սոցիալական դաշտը կազմող նշված շերտերի համակրանքներն առաջիկայում վերաբաշխվելու են: Այսօր «խաղի մեջ է» միայն մի-ջին խավը: 5 տոկոսը լռում է, բայց վերջին հաշվով կողմնորոշվելու է դեմի «ֆավորիտները» (Քոչարյան եւ Մանուկյան) բավարարվելով անձեռնմխելիության երաշխիքներով: 80 տոկոս աղքատները, որի շահերի արտահայտիչը հավակնում է լինել կոմկուսը, մասամբ ԱԺՄ-ն, քաղաքական կոլտուրայով ավելի մոտ են միջին խավին, նույնդես վերակողմնորոշվելու են: Քաղաքական դաշտն անփոփոխ է, սակայն փոխվել են դերերը: Եթե 1996-ին հիմնական քաղաքական ուժերը միավորվել էին նոմենկլատուրային բանդիտիզմի դեմ, ապա այսօր հասարակություն-իշխանություններ «հակամարտությունը» փաստորեն վերացել է, եւ Ռոբերտ Քոչարյանը ներկայացնում է ոչ թե նոմենկլատուրային իշխանություն, այլ «արցախյան թեւը» եւ չկուսակցականացված հասարակությունը: Ընտրությունների ամենամեծ վտանգը՝ երբ հաղթողն ստանում է ամեն ինչ, այսօր չկա: Նշեց դրն Զոլյանը անցանկալի համարելով հայաստանցի-դարաբաղցի տարբերակումները:

Բանախոսը վտանգավոր համարեց կոմունիստների ներկայիս կեցվածքը, որ կարող է ապակայունացման գործոն դառնալ: Նրանց ծրագրերում չեն երեւում երկիրը ճգնաժամից դուրս բերելու մեխանիզմները, իսկ արտաքին քաղաքականության մեջ, հարթելու դեղերում: Հայաստանն անբարյացակամության թիրախ կդարձնեն: Նույնիսկ Ռուսաստանի դարագայում: Դաշնակցության վերադարձը վաղուց սպասված եւ իրավական դեսության հիմքերը վերականգնելու քայլ գնահատելով, բանախոսը լավատեսորեն ավարտեց իր վերլուծությունը: Միավորման կենտրոնը ստեղծված է եւ ընդամենը չդիտի է քայքայել այն նկատի ունենալով Արցախ ժողովրդավարությունն առանցքը, ասաց նա:

ԼԵՎԻԼ ՊՈՂՈՍՅԱՆ

Իրանի դեսպանատան նվերը արեւելագիտական ֆակուլտետին

Իսլամական հեղափոխության 19-րդ տարելիցի նշման շրջանում որոշակի բաժնմամբ էր հատկացված ԵՊՀ արեւելագիտական ֆակուլտետի ուսանողներին: Իրանական դեսպանատան հովանավորությամբ վերանորոգվել է ԵՊՀ բանասիրական մասնաշենքի ձախ թեւի մեծ սրահը, որը կրելու է մեծ բանաստեղծ Ֆիրդուսու անունը եւ ծառայելու է արեւելագիտական գիտաժողովների, գեկուցումների կազմակերպմանը:

Արեւելագիտական ֆակուլտետի եւ իրանական դեսպանատան համագործակցությունը, որը սկսվել է իրանագիտության մի կաթիլից եւ հասել մինչեւ իսկ մեծ սրահի վերանորոգումը, նպատակաուղղված է ԵՊՀ-ում իրանագիտության խոշոր կենտրոնի ստեղծմանը: Այս ձեռնարկը տնտեսական եւ քաղաքական բնագավառներում հայ-իրանական բարեկամության եւ համագործակցության տրամաբանական շարունակությունն է: Հայ-իրանական դատմական շփումներ, ինչպես նաեւ Իրանի կառավարության կողմից հայ համայնքի, հայ մշակույթի օջախների եւ կոթողների նկատմամբ ցուցաբերած առանձնահատուկ բարյացակամությունն ու ուշադրությունը իրենց հերթին դարարտ հող են ստեղծել նման բարեկամության համար:

ՀՀ վարչապետ եւ նախագահի դաշտոնակատար Ռոբերտ Քոչարյանի, կրթության նախարար Արշաուս Պետրոսյանի, ԵՊՀ ռեկտոր Ռաֆիկ Մարտիրոսյանի, Իրանի դեսպան Համիդ Ռեզա Նիֆար Էսֆահանիի ներկայությունը փաստում է այն մեծ կարեւորությունը, որ կողմերը հաղորդում են երկու երկրների հարաբերությունների սերտացմանը: Վերջում հատուկ հուշագիր եւ մեդալներ հանձնվեցին հայ-իրանական հարաբերություններում առանձնահատուկ ավանդ ունեցող անձանց՝ Վարդան Ոսկանյանին, Սերգեյ Աղաջանյանին եւ Վարդուհի Սարոյանին:

ՌՈԶԵՆ ՇԱԲՈՅԱՆ

Լյուդմիլա Հարությունյան. «Միակ դարտվողը կլինի այն գուշակը, որը դատմեց վաս աղագայի մասին»

ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Լյուդմիլա Հարությունյանը քաղաքական իրադարձությունների կենտրոնից նահանջել է, սակայն «մարտադաշտը» չի լքել եւ, բնականաբար, չէր կարող անտարբեր դիտորդի դեր ստանձնել երկրի համար բախտորոշ այս իրավիճակում: Տկն Հարությունյանը, իրադրությունը գնահատելուց զատ, դատի «դրամատիզմը» մեղմելու եւ ժողովրդի հավատական շահին լավագույնս համադատասխանեցնելու ուղի է առաջարկում:

«Փաստորեն այն ուժը (կամ լիդերը), որը փորձում էր մենաշնորհ դարձնել իշխանությունը եւ երկրի ճակատագրի տնօրինումը, հեռացավ ու դիտի արժանին մատուցել նրանց, ովքեր դրան նդատաեցին. մեր թղթակցին ասաց նա: Համընդհանուր ճգնաժամը գաղիս էր նախկին նախագահի ձեւավորած իրավիճակից: Ազգի անունից խոսում էր մի մարդ, որը չէր արտահայտում ազգի շահը, նույնիսկ չգիտեր այդ շահը: Այժմ ստեղծվել է նոր իրավիճակ, երբ ազգի ողջ ներուժն ուղղվելու է մեր հարցերի լուծմանը: Իրավիճակ, որը ժիտելու է իշխանության «մոնոդոլացումը»: Առերեւույթ ուժային կառույցները հզոր են, միավորված, եւ աշխարհը տագնաղ ունի, թե Հայաստանը կգնա այդ կառույցների կենտրոնացման ճանապարհով: Ո՞րն է այդ տագնաղը փոխարինելու եղը:

Այսօր գործում են քաղաքական ուժեր, որոնք իրար մեջ մրցելով գնում են նախագահի բուսափոյթ ընտրություններին՝ հաջորդ մոնոդոլիստը դառնալու համար: Սա է սխալի արմատը: Հաջորդը չդիտի է մոնոդոլիստ լինի, հաջորդը դիտի ազգային վստահության իշխանություն լինի: Ընտրություններն այդ իշխանության ձեւավորման, քաղաքական ուժերի կենդանի դարզելու մեխանիզմն են: Յուրաքանչյուր ուժ կստանա իշխանության այն բաժինը, որին կարժանանա ընտրություններում, ստանձնելով իր վստահության չափին համադատասխանող դատասխանատվության բաժինը: Կարելի է քաղաքական բանակցությունների միջոցով դայմանավորվել հիմքի՝ ազատ, արդար եւ բափանցիկ ընտրությունների մասին, ջենտլմենական համաձայնության գալ իրար չխոցելու վերաբերյալ: Սա է միակ լուծումը:

Այս ճանապարհով լուծվում է նաեւ աշխարհին իբրեւ ժողովրդավարական երկիր ներկայանալու խնդիրը, որը կարող է օրինակ դառնալ ԱՊՀ երկրների համար, որոնք ահաբեկչությունից ահաբեկչություն են գնում: Այսպես կհաղթի ժողովուրդը, եւ միակ դարտվողը կլինի այն գուշակը, որը դատմեց, թե աղագան շատ ավելի վատն է լինելու»:

Կարծում ենք, ի դեդ, որ հատկապես սա նկատի ուներ Ռ. Քոչարյանը, երբ խոսում էր ընտրությունները քաղաքական ուժերին միավորելու համար օգտագործելու հնարավորության մասին:

Լ. Պ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հասարակություն

Տանրապետության նախագահի հրաժարականը եւ դրա հետ կապված իրադարձություններն արդեն անվանվել են «թավշյա հեղափոխություն»: Ես չէի ուզենա, որ այդ բառերը ընկալվեին իբրեւ փոխաբերություն. դրանք միանգամայն իրական իմաստ ունեն: Այդ հրաժարականով Հայաստանի կյանքում մի բոլորովին նոր փուլ է սկսվում: Վերանում է երկրի ուսերին ծանրացած ճնշումը:

Խնդիրն այն չէ՝ քարեր նետե՞նք, թե՞ չնետենք զնացողների հետեւից: Ամեն տեսակի վրեժխնդրություն, առավել եւս քաղաքական վրեժխնդրությունը, վայել չէ քաղաքակիրթ մարդուն: Բայց հասկանալ, գնահատել անցածն անհրաժեշտ է առաջան տեսնելու համար, մի անգամ եւս այդխան ծանրորեն չսխալվելու համար: Այս իրողությունը մեզանից պահանջելու է շատ ծանր ճշմարտություններ ասել անցյալի մասին, այն ութ տարիների մասին, երբ Հայաստանում իշխանության գլուխ էր կանգնած իրեն Հայոց համազգային շարժում անվանող կազմակերպությունը Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ:

Ամենամեծագույն արատը, որն ուներ նախորդ իշխանությունը, արհամարհանքն էր ժողովրդի նկատմամբ, ընդգծված անտարբերությունը նրա կարիքների, տրամադրությունների եւ կարիքների հանդեպ: Այդպիսի ժողովրդավարություն չի լինում: Ես ամենեւին արեւմտյան ժողովրդավարության երկրպագուն չեմ. բայց այդ համակարգը, որին կարծես թե հետեւում էին մեր իշխանությունները, հասկանալի է կողմնորոշվում է դեպի հասարակությունը; նրա կարիքը: Բայց այս ութ տարիների ընթացքում մեզ վարժեցրին այն բանին, որ հասարակության վերաբերմունքը, տրամադրությունները, վիճակը տասներորդական բաներ են իշխանության համար:

Այդպիսի մթնոլորտը չէր կարող բարոյալքող ազդեցություն չգործել հասարակության, ժողովրդի վրա: Երեւի իրենց ճշմարտությունն ունեն նաեւ այն մարդիկ, որոնք խոսում են Տեր-Պետրոսյանի կառավարման տարիներին ձեռք բերած նվաճումների մասին. բայց ոչ մի նվաճում չի կարող հավասարակշռել այն մռայլ մթնոլորտը, մարդու եւ հասարակության անզորության այն մռայլ զգացողությունը, որը համակել էր մարդկանց Հայաստանում:

Այդպիսի զգացողությամբ հասարակությունն ու ժողովուրդը ոչ մի լավ բան անել չեն կարող: Պատահական չէ, որ այդխան մարդ հեռացավ Հայաստանից: Գնում էին ոչ միայն այն պատճառով, որ արդելու նյութական բոլոր հնարավորություններն արդեն սպառված էին: Գնում էին այդ ճնշող, խեղդող մթնոլորտից ազատվելու համար: Այս ճշմարտությունը պետք է ասվի ամենայն հասկությամբ:

Չէ՞ որ նախագահը կարող էր հանկարծ մեկին վերցնել եւ նստեցնել նախարարի աթոռին միայն այն պատճառով, որ դա իրեն դուր էր գալիս, առանց հաշվի առնելու, թե այդ մարդն ո՞վ է, ի՞նչ հմտություն ու համարում ունի ժողովրդի մեջ: Հայաստանում մշակույթի նախարարությունը միշտ շատ կարեւոր օղակ է եղել իշխանության համակարգում: Միշտ չէ, որ այդ պատասխանը գտնել են արժանի մարդիկ. բայց պատահական մարդիկ չեն եղել: Իսկ մեր նախարարը երկար ժամանակ պատահական մարդ էր: Հարցա լուսավորության նախարարության գլուխ եկած փորձանքնե՞րը: Հարցա արտաքին գործերի վերջին երկու նախարարնե՞րը... Բայց այս նշանակումները սոսկ մանրամասներ չեն, դրանք բնորոշ, տիպական առանձնահատկություններն են այն համակարգի, որ ստեղծվեց մեզանում անկախություն ստանալուց հետո:

Դուք հիշո՞ւմ եք, թե ներքին գործերի նախկին նախարարն ու նախկին քաղաքաքեսը ինչպես էր պատասխանում իր ամրոց-առանձնատան արժեքի մասին հարցերին՝ համահրանքով: Կամ «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրենը երեքհարկանի առանձնատուն է կառուցում, եւ երբ նրան հարց են տալիս, թե ինչպես է կառուցել, առանց մազաչափ իսկ նեղվելու, վստահորեն բացատրում է, որ ամուսինը հոնորարներ է ստացել արտասահմանում կարդացած դասախոսությունների համար, տունը կառուցել են դրանով... Ի՞նչը կարող էր ավելի բարոյալքող ազդեցություն ունենալ շարքային քաղաքացու վրա, քան այս անսքող ու անշեղար, անհագ շահատենչությունը: Եվ այդ մարդիկ մեզ սովորեցնում էին, թե մենք անկախ պետականություն ենք կառուցում, եւ հանուն դրա զոհեր են պետք...

Այս է դառը ճշմարտությունը, եւ պետք է հնչի ամբողջ ուժով՝ մեր բարոյական մթնոլորտը մաքրելու համար: Հետաքրքրություններ եւ վիրակների որս, այո, չպետք է լինի, եւ ՀՀՇ-ի անդամներն ու համակիրները, Լ. Տեր-Պետրոսյանի բոլոր կողմնակիցները նույնպիսի քաղաքացիներ են, նույն իրավունքներով, ինչ ՀՀՇ-ի բոլոր հակառակորդները: Բայց իրական բնույթի արարքներ կան, որոնց անպատիժ մնալը ներսից աղականելու է եւ եկող տարիների մթնոլորտը...

ՀՀՇ-ն մեզ շատ ծանր ժառանգություն թողեց նաեւ գաղափարախոսական խնդիրներում: Այն, ինչ ասում էին բացահայտորեն Բագրատյանի եւ Բլեյանի նման մարդիկ, ընկած էր այս տարիների ամբողջ քաղաքականության հիմքում: Դա մի ամբողջ գաղափարախոսական գիծ էր, որն անցկացվում էր նախագահի եւ ՀՀՇ-ի կողմից, սկսած 1990-ից եւ ավարտված ամենավերջին հրապարակումներով: Խորհրդային իշխանությունը տասնամյակների սխալներից ու դեգերումներից հետո հասկացավ, որ ազգերի համագործակցությունը չի կարող կառուցվել ազգային պատմության, հոգեբանության, ազգային մշակույթի անտեսման հիմքի վրա: 60-ականներից սկսած, մեր ժողովուրդը ազգային մեծ զարթոնք ապրեց: Եվ տրամաբանականն այն պետք է լիներ, որ Հայաստանը, դառնալով անկախ պետություն, շարունակեր ու խորացներ այս գիծը: Բայց ուղիղ հակառակը եղավ: Մի զարմանալի մոլեգնությամբ ՀՀՇ-ն հարձակվում էր ազգային արժեքների վրա՝ սկսած պատմությունից (հիշեցնեմ Բլեյանի քաջագործությունները այս ասպարեզում), ցեղասպանության հիշողությունից ու Հայ դատից մինչեւ հայ գրականություն, մինչեւ դեռ ամենավերջերս պաշտոնաթերթի էջերից հնչած դատողությունները հայկական ֆաշիզմի վտանգների մասին:

Սա ոչ միայն պակասավոր, ժողովրդի հոգին ոչ մի կերպ հաշվի չառնող գաղափարախոսություն էր, այլեւ շատ աղետավոր էր իր քաղաքական հետեւանքներով: Դրա մի կողմը ղարաբաղյան կնճռի նկատմամբ ՀՀ ղեկավարության որդեգրած վերաբերմունքն էր: Այն, ինչ կատարվեց այս վերջին ամիսներին, ակնհայտորեն Լ. Տեր-Պետրոսյանի սխալը չէր, այլ նրա քաղաքականության տրամաբանական շարունակությունը. քաղաքականություն, որի հիմքում ընկած էին նախկին նախագահի հոգուն հարազատ գաղափարները: Այս գաղափարախոսությունը համահրանքով էր վերաբերվում ազգային արժեքներին, ելնելով այն մտածումից, որ բոլոր հոգեւոր արժեքները (իսկ ազգային արժեքները առաջին հերթին հոգեւոր արժեքներ են) ոչինչ են, իսկ նյութական ձեռքբերումները՝ ամեն ինչ: Անվարան ընտրելով զարգացման արեւմտյան ուղին ու ձգտելով ամեն կերպ հարմարվել Արեւմուտքին, հանուն դրա նրան զոհաբերում էին ազգային (եւ մնացած բոլոր հոգեւոր) արժեքները. այդ թվում եւ Հայ դատը եւ Ղարաբաղը: Ես միշտ դեմ եմ եղել եւ հիմա էլ դեմ եմ այսպիսի քաղաքականությունը դավաճանական համարելուն. սա մեր ազգային մտածողության դրսեւորումներից մեկն է. այլ հարց է, որ այս քաղաքականությունը խորապես վնասակար է. եթե չասեմ կործանարար...

Եվ, վերջապես, ՀՀՇ-ի քաղաքականության մյուս, մեզ համար դարձյալ կործանարար կողմն արհամարհական վերաբերմունքն էր մշակույթի եւ գիտության նկատմամբ: Խորհրդային ժամանակներում, բոլոր կորուստների հետ մեկտեղ, մեր ազգային մշակույթը այնպիսի զարգացում ապրեց, գիտությունը այնքան նվաճումներ ունեցավ, որ մենք բաց ճակատով էինք երեւում աշխարհին, թեեւ մեր դրոը չկար ՄԱԿ-ի շենքի առջեւ: Իսկ այսօր մենք ունենք ավերվող մշակույթ եւ քանդվող գիտություն: Գիտությունների ազգային ակադեմիան, որը խորհրդային տարիներին, իր կազմակերպական բոլոր թերություններով հանդերձ, արժանի ավանդ ներդրեց ոչ միայն հայկական եւ խորհրդային, այլեւ համաշխարհային գիտության մեջ, այս տարիների ընթացքում, իշխանությունների նպատակամղված քաղաքականության հետեւանքով, հայտնվեց այնպիսի վիճակում, երբ մի կերպ է պահպանում իր գոյությունը, եւ գիտնականի աշխատավարձը այնքան խղճուկ է, որ մարդիկ ամաչում են չափն ասել: Եվ այդ այն դեպքում, երբ ակնհայտ էր, որ հենց գիտությունը եւ գիտական կադրերն են Հայաստանի գլխավոր հարստությունը: Պարադոքսն այն է, որ ՀՀՇ-ի ղեկավարության մեջ շատ կային գիտական եւ գրական շրջանակներից դուրս եկած մարդիկ, եւ դեռ երեկ մոսկովյան հեռուստաընկերություններից մեկը հիշեցնում էր, որ ՀՀ նախկին նախագահը «բանաստեղծ էր եւ հումանիստ»: բայց այս բոլորը միայն պաճուճանքներ դուրս եկան: Ամեն ինչ որոշվեց տուկայական տնտեսության իրենց ընտրած առավել աղետավոր տարբերակով, որը մշակույթի նկատմամբ առանձին հարգանք չէր ենթադրում, եւ կառավարությունում գործող մեր բոլոր մտավորականները իրականում շատ հեռու էին հոգեւոր ոլորտից...

Մենք գիտենք, որ սպիտակ ձեռնոցներով քաղաքականություն անել հնարավոր չէ: Բայց քաղաքական անբարոյականության այդպիսի ծաղկումը, ինչին վկա եղանք այս վերջին տարիներին, երեւի աննախադեպ էր: Սկսվեց հին խորհրդային-կուսակցական նոմենկլատուրայի զանգվածային հավատափոխությամբ, եւ նախկին գործիչներից շատերը դարձան նոր ռեժիմի առաջատարներ, նախարարներ ու այլեւայլ մակարդակի ղեկավարներ: Այնուհետեւ նախկին զինակիցները սկսեցին կենաց ու մահու պայքար մղել միմյանց դեմ, չխորշելով ամենաանվայել մեղադրանքներից: Ապա սկսվեցին զարմանալի, անհասկանալի սպանությունները, որոնց հանրապետության նախագահը եւ մյուս ղեկավարները նայում էին անհասկանալի անտարբերությամբ ու հանգստությամբ. ընդ որում, սպանվում էին եւ նախկին վարչակարգի, եւ ներկայի հայտնի դեմքեր... Այս բոլորի պսակը երկրապահների պատգամավորական խմբի հանկարծական ընդլայնումն էր կրկնակի չափով՝ ի հաշիվ երեկվա կառավարող խմբակցության պատգամավորների: Այնպես թեթեւ ու սահուն տեղափոխվեցին, կարծես երեկ իրենք չէ, որ L. Տեր-Պետրոսյանի կամ նրա տիկնոջ մի քաղցր հայացքին արժանանալու համար պատրաստ էին հակառակորդներին անգամ ձեռնամարտի հրավիրել...

Ապագայից ու նոր նախագահից շատ բան սպասելը առնվազն միամտություն կլիներ: Անհայտ է, ով է ընտրվելու, ինչ ուժերի վրա է հենվելու: Մի բան հայտնի է՝ շատ վաս, շատ դժվար ժառանգություն է ստանալու: Այնպես որ վարդագույն սպասելիքները անտեղի են: Բայց եթե որոշ հիմնարար խնդիրներ չհստակվեն ու չլուծվեն, այս վիճակից դժվար թե կարողանանք դուրս գալ: Եվ ամենաառաջինը այն է, որ ժողովուրդը գոնե նվազագույն վստահությունը պետք է ունենա նախագահի, կառավարության, ամբողջ պետության նկատմամբ: ՀՀ քաղաքացին պետք է վերջապես հավատա, որ սա իր երկիրն է, որ գոնե նվազագույն չափով իր ձայնն էլ են հաշվի առնելու այս պետության խնդիրները լուծելիս, որ մտածելու են իր կարիքների ու հոգսերի մասին...

ԱՇՈՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՏՔ

Ո՞ւր ենք գնալու եւ ինչպե՞ս

ՀԱՅԱՏՔ

Ոչ միայն նախագահ, այլեւ երկրի զարգացման ուղղություն

Առաջիկա նախագահական ընտրությունները, ըստ իս, լինելու են նաեւ մի յուրատեսակ հանրաքվե, ուր վերջապես ու վերջնականապես պարզվելու է, թե մեր ժողովուրդը հետագա զարգացման ո՞ր ուղղությունն է ընտրում: Երկրի ներքին կյանքում դա վերաբերում է տնտեսական համակարգի, արտաքին հարաբերություններում՝ քաղաքական կողմնորոշման հնարավորությանը:

Չնայած նախագահության թեկնածուների առաջադրումները դեռ շարունակվում են, սակայն արդեն պարզ է, որ նրանցից միայն մեկն է հանդես գալիս համակարգային փոփոխության կարգախոսով: Դա Հայկոմկուսի ղեկավար Սերգեյ Բաղդասարյանն է, որի հաղթանակի դեպքում ներկա վարչակարգի կառուցվածքը, որ չգիտես ինչու՝ տուկայական հարաբերություններ ենք անվանում, վերադարձվելու է դեպի սոցիալիստական տնտեսավարման հուն: Կոմունիստների կողմից տնտեսության բազմակազմութաձեւությունն ընդունելու, հատկապես սպասարկման ոլորտում մասնավոր սեփականությունը հանդուրժելու հայտարարությունները հազիվ թե վստահության արժանի են: Նրանք տասնամյակներով սովորել են տնտեսավարման միայն մեկ կենտրոնացված-պլանային համակարգի, եւ ներկայիս կոմունիստական Չինաստանին հետեւելու խոստումները, որքան էլ գոնե իրենք դրան հավատում են, լավագույն դեպքում բարի ցանկություն են: Սերգեյ Բաղդասյանի հաղթանակը անվերապահորեն բերելու է սեփականության վերաբաշխման, ազգայնացումների ու կոլեկտիվացման գործընթացների, ինչը երբեք առանց լուրջ ցնցումների ու նույնիսկ առանց արյունահեղության չի եղել եւ չի լինելու: Այս պարագայում խիստ կասկածելի են նաեւ երկրի ներքին կյանքում ժողովրդավարության արժեքներին, բազմակարծությանը, բազմակուսակցությանը հավատարիմ մնալու հավաստիացումները: Կոմունիստները սովոր են «իշխանությունը վերցնել լրջորեն եւ տեւական ժամանակով», ինչպես ասում էր Լենինը 1917-ին, իսկ դա ինքնըստինքյան ենթադրում է հենց անհանդուրժողականություն ամեն մի այլախոհության, ցանկացած ազատ խոսքի նկատմամբ: Պարզ տրամաբանությունը հուշում է, որ 5 տարում, մինչեւ հաջորդ ընտրություններ, նրանք անկարող պիտի լինեն ոչ սոցիալիզմ, ոչ էլ, առավել եւս, կոմունիզմ կառուցել: Դրա համար, մեղմ ասած, շատ ավելի տեւական ժամանակ է պետք: Հետեւաբար պարզ է, որ նրանց, իրենց ծրագրերն իրականացնելու համար, ուղղակի կենսականորեն անհրաժեշտ է լինելու իշխանությունը պահել ամեն գնով: Այս պարագայում էլ ի՞նչ ժողովրդավարության, խոսքի ազատության, հանդուրժողականության մասին կարող է խոսք լինել: Ուզենան էլ՝ չեն կարող դրան հետեւել: Սա կոմունիստների մեղքը չէ, դժբախտությունն է, որին, ավա՜ղ, ոչինչ հակադրել չեն կարող: Ով նրանց հետ նույնիսկ ամենաանշնաշան բանում համաձայն չէ՝ «թշնամի» է: Ընդսմին, ոչ թե իրենց «թշնամին», այլ՝ «ժողովրդի»: Որովհետեւ չգիտես ինչու համոզված են, թե մեր ժողովուրդը հենց իրենց պատկերացրած սոցիալիզմն է ուզում: Դե, քանի որ դա այդպես է, ըստ իրենց, «ժողովրդի կամքին դեմ գնացողները» պետք է կյանքից «դուրս մղվեն»: Եղանակը կարեւոր չէ. միջոցների ընտրության լա՜յն ասպարեզ կա, հարուստ «փորձ»: Ահա այս առումով առաջիկա նախագահական ընտրությունները նաեւ մի շատ էական «հասարակական հարցում» են լինելու՝ ժողովուրդն ուզո՞ւմ է հայ կոմունիստների պատկերացրած հասարակարգի վերածնունդը եւ համաձա՞յն է, արդյոք, դրա համար «վճարել» իր այլախոհի մասի կյանքով ու ճակատագրերով:

Նախագահության մյուս թեկնածուներից ոչ մեկը հասարակարգային այսպիսի արմատական փոփոխության կարգախոսով հանդես չի գալիս: Սակայն նրանցից ոչ մեկը համաձայն չէ նաեւ ՀՀՇ-ի ներմուծած վայրենի կապիտալիզմը պահպանելուն: Ռոբերտ Քոչարյանը, Վազգեն Մանուկյանը, Պարույր Հայրիկյանը, օրինակ, կողմ են տնտեսության ազատականացման քաղաքականության շարունակմանը, ավելի կամ պակաս շեշտումներով եւ հատկապես սոցիալական ոլորտի նկատմամբ պետության հոգածությունը մեծացնելու պայմանով: Արամ Սարգսյանը ավելի հստակ է արտահայտվում պետության կարգավորիչ դերի ուժեղացման մասին, հրապարակ նետելով միջազգային սոցիալ-դեմոկրատիայի «Շուկա այնքանով, որքանով հնարավոր է, պետական կարգավորում այնքանով, որքանով անհրաժեշտ է» կարգախոսը:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականությանը, ապա ընդգծված արեւմտամետ են Վազգեն Մանուկյանն ու Պարույր Հայրիկյանը: Մյուսները, որեւէ կերպ Արեւմուտքին հակադրվելու կտրուկ հայտարարություններ չանելով, այնուամենայնիվ, հասարակական գիտակցության մեջ ընկալվում են իբրեւ ռուսամետներ: Այդ համարումն ունեն թե Ռոբերտ Քոչարյանը, թե Արամ Սարգսյանը, թե Սերգեյ Բաղդասյանը, թե մյուս, շատ ավելի փոքր շանսեր ունեցող թեկնածուները: Ընդսմին, այստեղ եւս նրանց կեցվածքներում էական նրբերանգներ կան: Եթե Ռոբերտ Քոչարյանն ու նրան սատարող ուժերը (Դաշնակցություն, ռամկավարներ, երկրապահներ եւ այլն), Արամ Սարգսյանի ու նրա կողմնակիցների հետ կողմ են Ռուսաստանի հետ հավասար, արժանապատիվ գործընկերային հարաբերությունների, ապա Սերգեյ Բաղդասյանը դեմ չէ «Ռուսաստան-Բելառուս» միությանը Հայաստանի անվերապահ անդամակցությանն ու նույնիսկ Խորհրդային Միության վերականգնմանը, ինչը անվերապահորեն հանգեցնելու է երկրի անկախության կորստի կամ, լավագույն դեպքում, էական սահմանափակումների: Այս տեսակետից նույնիսկ երբեմնի միեւնույն «բնից թռած» Արամ Սարգսյանի ու Սերգեյ Բաղդասյանի միջեւ սար ու ձորի տարբերություն կա: Արամ Սարգսյանը, խիստ կարեւորելով Ռուսաստանի հետ հարաբերությունները, նշում է, թե մյուս երկրների հետ «Հայաստանի հարաբերությունները պետք է ձեւավորվեն այնքանով, որքանով չեն վնասում հայ-ռուսական կապերին», սակայն նա կտրականապես դեմ է երկիրը «Ռուսաստանի կցորդ» դարձնելու գաղափարին, ինչը, ակնհայտորեն, Սերգեյ Բաղդասյանի դիրքորոշումն է:

Առաջիկա նախագահական ընտրությունները նաեւ այս առումով են երկրի հասարակական կարծիքի յուրատեսակ հարցում լինելու: Այժմ ձեւավորվում է նոր աշխարհակարգ, ուր Միացյալ Նահանգներն առանց ձեւականությունների, նույնիսկ ցինիկ ու անպատկառ հանդգնությամբ փորձում են սանձնել «աշխարհը կառավարողների», երկրագնդի բոլոր ժողովուրդներին իրենց կենսակերպը պարտադրողի դերը: ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի վերջին զայրացուցիչ հայտարարությունները Իրանի ճգնաժամի կապակցությամբ, թե իրենք կարող են Բաղդադին օդային հարված հասցնել նույնիսկ առանց ՄԱԿ-ի թույլտվության, այդ բանի անբեկանելի վկայությունն են: Զարմացուցիչ է, որ Քլինթոնը հանդգնեց ողջ համաշխարհային հանրությանն ի լուր Իրանին սպառնալ նույնիսկ միջուկային հարվածով: Մի՞թե սա մոլագարություն չէ: Քլինթոնին հանգիստ չի՞ տալիս Տրումենի սկզբը:

Անձամբ ես չեմ ուզում, որ իմ ճակատագիրը տնօրինի անդրօվկիանոսյան որեւէ «տեր», որն առանց այն էլ արդարամտությամբ երբեք աչքի չի ընկել: Սպասենք ու տեսնենք, թե ի՞նչ է ուզում մեր ժողովուրդը:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Իրանի իսլամական հեղափոխության դրդապատճառներն ու գնահատականները

Իրանի իսլամական հեղափոխության դրդապատճառների վերաբերյալ տեսակետները, ինչպես նաեւ տված գնահատականները էապես տարբերվում են: Քաղաքագետներից ոմանք ընդգծում են հետեւյալ դրդապատճառները.

1. Շահի վարչակարգի կողմից Իրանի ժողովրդի ազգային ու կրոնական զգացմունքների ոտնահարում եւ իսլամի սկզբունքների ու ժողովրդի ավանդական արժեքներին հակասող տեսակետի պարտադրումը.

2. 70-ական թվականների տնտեսական ճգնաժամը, որի հետեւանքով աղքատության մատնվեցին Իրանի միջին եւ ստորին խավերը, որոնք երկրի բնակչության գերակշիռ մեծամասնություն էին կազմում.

3. Տասնամյակներ շարունակ Իրանի ժողովրդի ընդերքում, նրա մատակարարման ու կրոնական գործիչների շրջանում հասունացած գաղափարը՝ տապալել միապետական բռնատիրությունը եւ հաստատել ժողովրդավարական իշխանություն, որը կծառայի ողջ ժողովրդի շահերին:

Մեր կարծիքով այս տեսակետը առավել պատկերավոր եւ կատարյալ կլիներ, եթե տնտեսական գործոնին անդրադառնալիս նշվեր նաեւ, որ, այնուամենայնիվ, Իրանում հեղափոխության ժամանակ բնակչության կենսամակարդակը վերջին հարյուրամյակում ամենաբարձրն էր, թեեւ նավթի գների աճից առաջացած ազգային եկամտի անարդար բաշխման հետեւանքով ավելի ու ավելի էր խորացել հասարակության խավերի միջեւ ճեղքվածքը՝ դառնալով գրեթե անհաղթահարելի:

Բացի այդ, չպետք է անտեսել Մոհամեդ Ռեզա շահի կողմից անխիստ քաղաքական բոլոր ուժերի նկատմամբ գործադրվող ճնշումն ու այլախոհական ամենաանբան դրսեւորման խիստ անհանդուրժողականությունը: 1953 թ. հեղաշրջումից հետո անմիջապես լուծարելով ընդդիմադիր բոլոր կուսակցությունները, շահը դաժանորեն հաշվեհարդար տեսավ ոչ միայն դրանց ակտիվիստների, այլեւ հասարակ անդամների ու կողմնակիցների հետ: Իսկ 70-ական թվականներին լուծարվեցին հենց վարչակարգի կողմից ստեղծված կուսակցությունները: Նրանցից շատերը անցան ընդհատակ, սակայն էլ ավելի հաջողվեց շարունակել կուսակցական գործունեությունը: Այդ եզակիների թվում էր «Թուդեհ» համայնավարական կուսակցությունը, որը ղեկավարվում էր դրսից: Բացի այդ, ընդհատակում հիմնվեցին ձախ ուղղությամբ այլ կազմակերպություններ ու կուսակցություններ, որոնք մեծ ակտիվություն ցուցաբերեցին հեղափոխության ընթացքում: Կրոնա-քաղաքական կազմակերպություններն ու կրոնական տարբեր հոսանքները եւս, որոնք որոշիչ դեր ունեցան հեղափոխության հաղթանակում, հիմնականում ձեւավորվեցին ընդհատակում: Անմարդկային, դաժան հաշվեհարդարները կտրուկ բարձրացնում էին դրանց վարկը հասարակության լայն զանգվածների շրջանակներում: Եվ ահա թե ինչու կազմակերպությունների կոչերը դրական արձագանք գտան հասարակության մեջ, եւ ժողովուրդը ընտրեց այդ կազմակերպությունների հետեւից: Եվրոպայում ապրող իրանցի հայտնի քաղաքագետ, լրագրող դոկտոր Մուստաֆա Ալամութին իր «57-ի ճգնաժամը» (իրանական տոմարի 1357 թ. համընկնում է 1979-ին) գրքում Իրանում հեղափոխության հաղթանակի եւ իսլամական վարչակարգի հաստատման պատճառներն է համարում. ա) շահի առողջական ծանր վիճակը, բ) ԱՄՆ նախագահ Ջեյմս Քարտերի՝ մարդու իրավունքների հարցում վարած քաղաքականությունը եւ ԱՄՆ առարկությունը շահի ու Փեհլեւիների իշխանությանը, գ) շահի հակառակորդների համախմբումը իսլամի դրոշի ներքո:

Հեղափոխության վերաբերյալ «դավադրության տեսության» կողմնակիցները, ինչպես նրանց որակում են որոշ քաղաքագետներ, այն կարծիքին են, թե շահի իշխանության օրոք տնտեսական, քաղաքական եւ մշակույթի բոլոր բնագավառներում կտրուկ զարգացում արձանագրվեց, եւ երկիրը մոտենում էր Մոհամեդ Ռեզա շահի խոստացած «մեծ քաղաքակրթությանը», այլ կերպ ասած՝ Իրանը նոր ճապոնիա դառնալու շեմին էր: Սակայն ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի նյութած դավադրության արդյունքում Իրանին պարտադրվեց իսլամական հեղափոխությունը, որպեսզի երկրի հարստության թալանի ճանապարհին վերացնեն բոլոր խոչընդոտները: Այս տեսակետի կողմնակիցները նույնիսկ հեղափոխության ընդգծված հակաամերիկյան բնույթը բացատրում են ԱՄՆ-ի ավելի մեծ ու հեռահար շահերը հողակող ,փոքր վնաս: Փաստորեն գերագնահատելով ընդհանրապես Արեւմուտքի եւ մասնավորապես ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ուժերը՝ նրանք թերագնահատում են սեփական ժողովրդի ուժերը:

Նման տեսության ոչ ճշմարտացիության առնչությամբ կարելի է բազմաթիվ փաստեր նշել: Օրինակ, հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնին առաջ քաշեց «Շահից հետո ԱՄՆ-ի հերթն է» կարգախոսը, որի ուղղությամբ քարոզչական լայն գործունեություն ծավալվեց: Թեեւ հեղափոխությունից հետո հաստատված ժամանակավոր կառավարությունը, որը հիմնականում կազմված էր ազատամարտիկներից, աշխատում էր բնականոն փոխհարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ, սակայն 1979 թ. նոյեմբերի 4-ին իրենց «Իմամի ուղղության հետեւորդներ» կոչող մի խումբ ուսանողներ դիմեցին աննախադեպ քայլի՝ գրավեցին Թեհրանում ԱՄՆ դեսպանատունը եւ պատանդ վերցրին 52 աշխատակիցների: Ժամանակավոր կառավարության ղեկավար Մեհդի Բազորգանը, այդ դեպքից հանկարծակիի գալով, նոյեմբերի 13-ին հրաժարական տվեց: Մինչդեռ հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնին հավանություն տվեց այդ քայլին՝ գնահատելով որպես երկրորդ, ավելի կարեւոր հեղափոխություն: Դեսպանատան գրավմանը հաջորդեց ազատականներին իշխանությունից հեռացնելը, որոնք կողմ էին ԱՄՆ-ի հետ բնականոն փոխհարաբերությունների պահպանման: Թեեւ ԱՄՆ դեսպանատան գրավումը ապացուցեց, որ հեղափոխական Իրանը որեւէ երկյուղ չունի ամենահզոր տերություններից անգամ, այդ քայլ հետեւանքներ ունեցավ Իրանի իսլամական հանրապետության համար: Դեսպանատան գրավումից 4 օր անց Վաշինգտոնը դադարեցրեց ռազմական տեխնիկայի պահեստամասերի առաքումը Իրան, ապա ԱՄՆ նախագահ Քարտերն արգելեց Իրանից նավթ ներմուծելը՝ տարեկան շուրջ 3 մլրդ դոլարի վնաս պատճառելով Իրանին: Իսկ նոյեմբերի 14-ին ԱՄՆ նախագահի հրամանագրով ամերիկյան բոլոր բանկերում եւ դրսից մասնաճյուղերում Իրանի բանկային հաշիվները սառեցվեցին, ինչը շարունակվում է առ այսօր: Ի վերջո, 1980 թ. ապրիլի 19-ին Վաշինգտոնը խոսեց Իրանի հետ դիվանագիտական փոխհարաբերությունների մասին: Իսկ ապրիլի 26-ին Սպիտակ տունը փորձեց ռազմական գործողություններով ազատագրել պատանդներին՝ դեսանտ իջեցնելով Իրանի արեւելյան հատվածում գտնվող Թաբաս անապատում: Բայց այդ գործողությունը լիովին ձախողվեց: Նախագահ Քարտերը խոստովանեց պարտությունը՝ ստանձնելով ողջ պատասխանատվությունը: 1980 թ. սեպտեմբերին Թեհրանին պարտադրվեց Իրան-Իրաքյան պատերազմը, որի առաջին իսկ օրից Իրաքի ռազմական օդանավերի թիրախը Իրանի արդյունաբերական եւ ռազմական կարեւոր օբյեկտներն էին: Ուրախալի պատերազմի պատճառած միայն նյութական վնասը կազմել է 300 միլիարդից 1 տրիլիոն դոլար (տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են ներկայացնում):



Ըստ մեկ այլ տեսակետի իսլամական հեղափոխությունը որակվում է որպես Իրանի հասարակական կյանքի բոլոր բնագավառներ ներթափանցած արդիականացման հակազդեցություն: Այս առնչությամբ կարելի է նշել, որ թեեւ նախահեղափոխական շրջանում արեւմտյան, առավելապես ամերիկյան կենսակերպն իրոք պարտադրվում էր ժողովրդին՝ առօրյա կյանքում հետ մղելով խոր արմատներ ունեցող ազգային ու կրոնական ավանդույթները, ինչը, բնականաբար, ժողովրդի մեծամասնության դժգոհությունն էր առաջացրել, սակայն այս երեւույթը, հեղափոխության հասունացման առումով խիստ նշանակալից դեր ունենալով հանդերձ, ինքնըստինքյան չէր կարող դրա հիմք լինել, քանի որ հեղափոխությանն ակտիվորեն մասնակցում էին նաեւ արդիականացման կողմնակիցները:

Ի հակադրություն նշված տեսակետի կողմնակիցների, քաղաքագետների մի այլ խմբի կարծիքով, իսլամական հեղափոխությունն առաջընթացի խոչոր քայլ է իսլամական աշխարհում եւ համեմատելի է 16-րդ դարի եվրոպայի բողոքական շարժման հետ, որը, ինչպես հայտնի է, մեծ խթան հանդիսացավ բողոքականությունը ընդունած երկրների հասարակական կյանքի բոլոր բնագավառների զարգացման համար: Ամերիկյան հեղափոխությունը կրոնական տեսանկյունից ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ այստեղ եւս մոլեռանդության հասնող հավատն անժխտելի նշանակություն է ունեցել ԱՄՆ անկախության, զարգացման ու բարգավաճման հարցում: Հիրավի, այս իմաստով եթե համեմատենք ամերիկյան եւ իսլամական հեղափոխությունները, կարելի է նկատել զգալի նմանություններ: Այս տեսակետի կողմնակիցները իսլամական հեղափոխությունը գնահատում են որպես իսլամական աշխարհում նոր առաջադիմական քայլ, թեեւ դրանք կրոնական բնույթ են կրում:

Իրանում իշխող տեսակետի համաձայն, հեղափոխությունը իսլամական վերածնունդ է:

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Ռուսաստանը իրախյան հարցում՝ նոր նախաձեռնությամբ

ԹԵՀՐԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ռուսաստանը հանդես է եկել այն պետությունների ներկայացուցիչների հանդիպում անցկացնելու նախաձեռնությամբ, որոնք անհրաժեշտ են համարում իրաքյան հիմնախնդրի քաղաքական, այլ ոչ թե ռազմական լուծումը: Ինչպես այսօր հայտնի դարձավ Իրանի մայրաքաղաքի դիվանագիտական աղբյուրներից, այդ հարցն արծարծվել է Ռուսաստանի եւ Իրանի արտգործնախարարների՝ Եվգենի Պրիմակովի եւ Քամալ Խարազու հինգշաբթի երեկոյան կայացած հեռախոսազրույցի ընթացքում: Իրանի արտգործնախարարության ղեկավարը հավաստել է, որ իր երկիրն այսուհետեւ էլ ամեն ջանք կգործադրի Իրաքին առնչված ճգնաժամի քաղաքական կարգավորման համար:

Իրանն ազատ արձակեց արաբ կալանավորների առաջին խմբին

ԿԱՀԻՐԵ, 13 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանը հինգշաբթի երեկոյան ազատ է արձակել արաբ կալանավորների առաջին խմբին, դրանով իսկ կատարելով նախագահ Սադդամ Հուսեյնի խոստումը: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, առաջինն ազատություն են վերստացել 24 եգիպտացի: Անցած շաբաթ Սադդամ Հուսեյնը հայտարարել էր, որ Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Իսմաթ Աբդել Մագիդի խնդրանքով Իրանի ղեկավարությունը որոշում է ընդունել ներում շնորհել երկրի բանտերում պահվող բոլոր արաբ կալանավորներին: Նրանց ընդհանուր թիվը հասնում է 1200-1300-ի:

Բաղդադում Ժիրինովսկին ջուրը ցատկեց «հանուն խաղաղության»

ՍԿԿԱՐ, 13 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ-Ռուսաստանի լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Վլադիմիր Ժիրինովսկին, որը գտնվում է Բաղդադում, հատկապես «Ինտերֆաքս» թուրքական մասնավոր հեռուստաընկերության համար երկուսեռանոց ցատկաբեռարակից նետվել է այն հյուրանոցի լողավազանը, որտեղ կանգ է առել: Նրա խոսքերով, ինքը դա արել է «հանուն խաղաղության»: Հինգշաբթի երեկոյան Բաղդադից ուղիղ եթեր արձակվող հեռուստահարցազրույցի ժամանակ Ժիրինովսկին հայտարարել է, որ «Իրաքում ոչ ոք պատերազմ չի ուզում»: Հիշեցնելով, որ իր գլխավորած պատվիրակությունը պաշտոնական է եւ ներկայացնում է Ռուսաստանի Դաշնության Պետդուման, ռուսաստանցի ազատական ժողովրդավարների ղեկավարը հաղորդել է, որ մոտ օրերս մտադիր է հանդիպում ունենալ Իրաքի ղեկավար Սադդամ Հուսեյնի հետ: Դա կլինի նրանց հինգերորդ հանդիպումը իրենց ծանոթության տարիների ընթացքում:

Վրաստանի նախագահը նոր զրահապատ «Մերսեդես» կստանա Գերմանիայից

ԲՈՆՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն Գերմանիայից կստանա «Մերսեդես» մակնիշի նոր զրահապատ լիմուզին, որը որոշել են նրան նվիրել «Դայմլեր-Բենց» մեքենաշինական կոնցեռնը եւ Գերմանիայի Դաշնակցային Հանրապետության կառավարությունը: Նախորդ «Մերսեդեսը», որը մպրկել էր 1995 թվականին, գնդակոծված երկուշաբթի փաստորեն ոչնչացվել էր Թբիլիսիում կատարված մահափորձի ժամանակ: Սակայն ինքնաշարժը կատարել էր իր դերը եւ փրկել Վրաստանի ղեկավարի կյանքը: Գերմանական մամուլի հաղորդումների համաձայն, լույս կարգի նոր «Մերսեդեսն» արդեն գտնվում է ճանապարհին եւ Վրաստանի մայրաքաղաք կհասնի մինչեւ ընթացիկ շաբաթվա վերջը:

Հասանովը Բաքվի «Եվրոպա» հյուրանոցի աղօրինի շինարարության սկանդալի մեջ

ԲԱՔՈՒ, 13 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունվարի վերջին օրերին Բաքվի «Եվրոպա» հյուրանոցի անօրինական շինարարության եւ դրան Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովի ենթադրվող մասնակցության շուրջ բռնկած խայտառակությունը հասնում է գագաթնակետին: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, հինգշաբթի ուշ երեկոյան երկրի նախագահ Հեյդար Ալիեւին են ներկայացվել կառավարական հատուկ հանձնաժողովի հետաքննության արդյունքները:

Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեի եւ իրավապահ մարմինների ղեկավարների ստորագրած այդ փաստաթուղթը, որն այսօր հրապարակվել է մամուլում, լուրջ մեղադրանքներ է պարունակում հանրապետության արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարի հասցեին:

Ինչպես պարզվել է, այդ չարաբաստիկ հյուրանոցը կառուցվել է այն վարկային միջոցներով, որոնք Թուրքիան Ադրբեջանին էր տրամադրել արտաքին մանում երկրի դիվանագիտական ներկայացուցչություններ ստեղծելու համար: Նախագահին ներկայացված տեղեկանքից հետեւում է, որ արտգործնախարար Հասան Հասանովի նախաձեռնությամբ եւ անմիջական մասնակցությամբ վարկի հատկացումը փոփոխվել էր առանց դրա համար որեւէ հիմքի, եւ 10 միլիոն ամերիկյան դոլարը, որն այնքան անհրաժեշտ էր երկրի տնտեսական բարդ պայմաններում, ծախսվել էր Բաքվում եւս մի հյուրանոց կառուցելու վրա: Թեեւ կառուցվող շենքը սկզբում մատուցվում էր իբրեւ «դիվանագիտական համալիր», չդարձավ այդպիսին, իսկ հյուրանոցին կից բացված խաղատունն ու զվարճանքի մյուս հաստատությունները հիմնովին հակասում են կառույցի նախապես հայտարարված բնույթին:

Ինչպես ընդգծված է տեղեկանքի մեջ, Ադրբեջանի կառավարությունը փաստորեն անարդյունավետ վարկի տակ է ընկել: Ընդ որում, Հասան Հասանովը մոլորության մեջ էր գցել երկրի նախագահին, հայտարարելով, թե Թուրքիայի հետ ստորագրված համաձայնագրի պայմաններով վարկն իբր ենթակա չէ վերադարձման: Մինչդեռ իրականում, թեեւ միջոցները հատկացվել էին առանց տոկոսի, դրանց վերադարձման պայմանները բավականին խիստ էին. Ադրբեջանը պարտք պետք է լիովին մարեր մինչեւ 2001 թվականը: Փաստաթղթում նշվում է, որ այդ ամբողջ «գործառնության» հետեւանքով երկրին արտգործնախարարության պարտքը կազմում է 2,3 միլիոն դոլար: Երկրի տնտեսությանը հսկայական վնաս է հասցված, քանի որ փաստորեն «Եվրոպա» հյուրանոցի վաստակած ամբողջ տարադրամը երկրից դուրս էր տարվում կանխիկ:

Արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարին ներկայացվող ամենալուրջ մեղադրանքներից մեկը տեղեկանքի բովանդակած այն մատնանշումն է, որ նա կատերի մեջ է «Իմպերիալ» թուրքական ընկերության հետ, որի կառավարմանն էր հանձնվել «Եվրոպան»՝ ոչ առանց Հասան Հասանովի մասնակցության: Թուրքական այդ ընկերությունը խիստ կասկածելի համբավ է վայելում իր երկրում եւ հայտնի է թմրաբիզնեսի հետ ունեցած կապերով: Ինչպես ընդգծված է փաստաթղթում, դա հսկայական վնաս է հասցնում Ադրբեջանի նկարագրին աշխարհում:

Նախագահ Հեյդար Ալիեւն առայժմ վերաբերմունք չի դրսեւորել

Սիրո օր - Վալենտինի օր

Հին Հռոմում էր, որ քրիստոնեության երիտասարդ քարոզիչ Վալենտինը մահապատժի էր դատապարտվել: Նա դեռևս բանտում բուժել էր բանտապետի աղջկան ու... սիրահարվել նրան:

Մահապատժից առաջ Վալենտինն իր սիրելի աղջկան նամակ էր ուղարկել, ուր բացի չափազանց հուզիչ ու սիրո խոսքերից, նկարված էր մի փոքրիկ սիրտ:

Քարոզիչը գլխատվեց: Եվ, օ՜, հրաշք, սիրելի աղջկա ձեռքերի մեջ նկարված սիրտը սկսեց բաբախել:

Այդ ժամանակներից սկսած, երիտասարդ քարոզչի Վալենտինի նահատակման օրը կաթոլիկ աշխարհում համարվում է սիրահարվածների օր:

Հայաստանում սիրող զույգերի նմանատիպ տոն է Տրնդեզը:

Ըստ Ագաթանգեղոսի, Տիր աստծո մեհյանում մշտապես կրակ է վառվել եւ գոյություն է ունեցել «հրով շնչելու» կամ կրակով մահ գալու ծիսակատարություն: Այսպես են մեծարել հեթանոս հայերը աստղերի ու երկնքի, երագների մեկնիչ Տիրին, որը միաժամանակ գիտության, դպրության ու ճարտասանության հովանավորն էր:











Այսօրվա Տրնդեզը, անշուշտ, ժառանգել է իր պատմական նախնիներից որոշ մասնիկներ, հատկապես, եթե այն համեմատենք Տրնդեզի Արարատյան դիցաբանության մեկ այլ տարբերակի հետ: «Աշխարհի նոր սկիզբ է սա, Վահագն է կրկին ծնվում: Երկնից կրակ է թափվում: Օծվեք այս աստվածային կրակով եւ վերականգնեք ձեր մեջ աստվածային զորությունը»:

Պար էին բռնում տրնդեզված կրակի շուրջը, ծոներգեր էին հյուսում, փառաբանում էին Արային ու Վահագնին: Իսկ ջահել հարսները, որ մայրության կարոտ ունեին, թռչում էին այդ կրակի վրայով, օծելու համար իրենց արգանդը, որ իրենք էլ վահագնանման արի զավակներ ծնեն:

Ինչեւէ, անկախ նրանից, թե Սուրբ Վալենտինի օր է, Տրնդեզ, թե հրով շրջելու օր, միեւնույն է, այն մեզ համար դարձել է անչափ հարազատ եւ գեղեցիկ ծես: Կեսօրից սկսվում է քայլարշավ դեպի եկեղեցի, որտեղ արդեն վառվում է ավանդական խարույկը: Մեծ ու փոքր, տղա, թե աղջիկ, թռչում են կրակի վրայով եւ հենց այդ կրակից էլ կպցնելով իրենց մոմերը, Սուրբ կրակի մի կտոր տանում են իրենց տները: Ճանապարհին հանդիպելով ընկերների, բարեկամների, ուղղակի լավ մարդկանց, ողջունում են մեկմեկու, բարին ցանկանում, ասելով. «Տիարն ընդառաջ»:

Հենց այդ ճանապարհին էլ մենք հանդիպեցինք...

ՌՈՒԲԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ-Իմ առաջին սերը երգն է եղել: Չեմ թաքցնում, որովհետեւ 18 տարեկան էի եւ հրապուրանքները շատ էին: Յուրաքանչյուր ներկայացման ավարտին լավագույն դերասանը եղել է իմ սերը, յուրաքանչյուր համերգի ավարտին լավագույն երգչուհին կամ երգիչը եղել է իմ սերը: 27 տարեկան էի, երբ լուրջ սիրահարվեցի իմ կնոջը՝ մինչեւ օրս: 30 տարի ապրում ենք միասին, երեք զավակ ունենք: Եթե բնավորությունը նման չլինի եւ տարբեր մակարդակի մարդիկ լինեն, դժվար է, տարբեր խոսքեր են, իհարկե, նույնիսկ բառարանը չի կարող բացատրել, թե ինչ բան է սերը: Բայց դե առաջին սերն ով չի զգացել: Այն, ով հեշտադարձ հայացքով չի կարող հիշել իր առաջին սերը:

ՌԱՖԱՅԵԼ ՔՈԹԱՆՋՅԱՆ- Առաջին սեր հասկացողությունն ինձ համար շատ ծանր հետեւանք ունեցավ: Սիրահարվել եմ 10-11 տարեկանում եւ այդ զգացումն ապրեցի լիովին եւ լիաթոք: Դժբախտաբար, նա մահացավ: Չեռիս վրա հետքեր կան, որ ես ինքնասպանության փորձ արեցի: Այդ թեժությունը շատ բան այրեց եւ այն, ինչ հիմա կա, ես ապրում եմ երկրորդ, երրորդ, չորրորդ սեր, դրա պատճառներից է եւ ոչ թե հենց նույնը, ինչ որ կարող էի ապրել:

Ասեմ, որ լավատես լինելը նրանով է ճշմարտացի, որ միշտ սպասում կա եւ կարծում եմ, որ եթե իմ գործընկերները Իվ Մոնտանը, Ալեն Դելոնը, Մախմիլիան Շելը առաջացած տարիքում սիրահարվեցին եւ նույնիսկ ժառանգներ ունեցան, ճիշտ էին: Ես չեմ ուզում ինձ կտրել այդ մտքից: Չգիտեմ, թե ինձ ինչ կպատահի, ոչինչ կանխագուշակված չէ եւ սպասում կա:

ԷԴՎԱՐԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ-6-րդ, թե 7-րդ դասարանում թունդ սիրահարվեցի Լիանա Իսակածին, որը փոխանակային համերգի էր եկել մեր դպրոց իր դպրոցի աշակերտների հետ: Հավանաբար այն ժամանակ էր թունդ թվում: Ամենուր ուղեկցում էի: Առաջին զգացմունքն էր, հիմա զգում եմ, որ ոչ սեր: Հրապուրանք էր: Հետագայում Մոսկվայում միասին էինք սովորում եւ ես վերհիշեցի մանկությունս ու առաջին հրապուրանքը:

Հիմա եմ հասկանում, որ սեր չէր, որովհետեւ կյանքի ապրեցի, իրոք սիրահարվեցի, որն էլ ամուսնության վերածվեց, հետագայում նաեւ փոխադարձ հարգանքի, որովհետեւ նա մարդկային հիանալի գծեր ու որակներ ունի, որոնցով միայն հիանալ կարելի է:

ՆԱԲԵԿ Վ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՄԵՐ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԵՐԸ

«Ազգ»-ի ցուցասրահ



ԱՐԱՄՈՒՆԻ ՀԱՅԴՐՈՒԲԱԼ. 1947 թվականին ծնվել է Դուկասյանի շրջանի Թավշուտ գյուղում:

1970-ին ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը: Այժմ ապրում է էջմիածնում, ստեղծագործական գործունեության հետ աշխատում է տեղի ե. Թադեւոսյանի անվան նկարչական դպրոցում:

1971-ից պարբերաբար մասնակցում է հանրապետական ցուցահանդեսների: Բազմիցս ցուցադրվել է արտասահմանում՝ Կանադայում, Ֆրանսիայում, Մոնղոլիայում:

Հայաստանի նկարիչների միության անդամ է, վաստակաշատ մանկավարժ:

Նկարները գտնվում են աշխարհի տարբեր երկրներում (հիմնականում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Իսպանիա) եւ մասնավոր հավաքածուներում:

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Հայ պատանի պարողների հաղթանակը

Արսեն Մեհրաբյանը եւ Տիգրան Միքայելյանը լավագույն ինգյակում

Վերջերս Շվեյցարիայի Լոզան քաղաքում անցկացվեց դասական պարի միջազգային մրցույթ: Ավանդական այդ ստուգատեսին մասնակցում էին, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ճապոնիայի, Ֆինլանդիայի, Ուկրաինայի, Ղազախստանի, Կանադայի, Անգլիայի եւ աշխարհի այլ երկրների ներկայացուցիչները:

Մեր հանրապետությունից Լոզանում հանդես եկան Երեւանի պարարվեստի ուսումնարանի առաջին կուրսի ուսանող Արսեն Մեհրաբյանը եւ ուսումնարանի շրջանավարտ Յուրիխի պարարվեստի դպրոցում մասնագիտական դասընթացներ անցնող Տիգրան Միքայելյանը:



Տիգրան Միքայելյան

Արսեն Մեհրաբյան

Մրցույթի նախնական փուլում թեմահարթակ դուրս եկան 15-18 տարեկան 110 աղջիկներ եւ 24 պատանիներ: Փայլուն արդյունքի հասան մեր հանրապետության ներկայացուցիչները, ովքեր պատանիների մրցակցությունում տեղ գրավեցին հինգ լավագույնների ցուցակում: Հնգյակի մյուս երեք անդամները Ֆրանսիայի, Լեհաստանի եւ Ճապոնիայի ներկայացուցիչներ էին:

Ռ. Մ.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

Նախաձեռնողը «Հարմոնիան» էր

Մոտալուտ գարնան նախօրեին Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում թեւածեց «Ռոմանսի բարդ տունչը»: Այդ խորագիրն ուներ ռուսական մշակույթի «Հարմոնիա» միջազգային կենտրոնի կազմակերպած բարեգործական համերգը, որի նկատմամբ հետաքրքրությունը շատ մեծ էր: Ներկա էին Հայաստանի ազգային փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի դեսպանության աշխատակիցներ, բազմաթիվ երաժշտասերներ: Ֆիլհարմոնիկի փոքր դահլիճը լեփ-լեցուն էր:

Մենահամերգով հանդես եկավ «Հայաստան-Ռուսաստան» ընկերության վարչության անդամ Մայա Բաղդասարյանը: Երգչուհու համերգային ծրագրում ընդգրկված էին ռուսական եւ գնչուական երգեր ու ռոմանսներ, որոնք նա մատուցեց կատարողական պատշաճ մակարդակով ու ինքնաշիտությամբ: Հնչեցին Բ. Պաստերնակի, Ս. Եսենինի, Մ. Մատուսովսկու, Մ. Լախտինայի, Ա. Կուսիկովայի եւ ուրիշ հեղինակների տեքստերի հիման վրա գրված երգեր ու ռոմանսներ: Կատարված երգերից մեկի («Դեղին տերեւ») հեղինակն էլ էլվինա Մակարյանն էր: Լյուդմիլա Գավրուշինայի տեքստի հիման վրա գրված երգը նվիրված էր Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպան Անդրեյ Ուռնովին եւ նրա տիկնոջը՝ Թամարա Ուռնովային: Երգչուհուն նվագակցում էր դաշնակահար Լեւոն Հարությունյանը

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՆԱԳԱՆՈ-98

Օլիմպիական մրցաստարեզներում

Վերջապես սկսվեց հոկեյի հիմնական մրցաշարը: Հետաքրքրությունն այս մրցումների նկատմամբ չափազանց մեծ է, չէ՞ որ օլիմպիադաների պատմության մեջ առաջին անգամ հանդես են գալիս ուժեղագույն պրոֆեսիոնալները:

Երկու խաղում՝ Կանադա-Բելառուս եւ Ռուսաստան-Ղազախստան, կողմերից մեկի առավելությունն ակնհայտ էր: Կանադացիները հաղթեցին 5-0, ռուսները՝ 9-2 հաշվով:

Չեխիա-Ֆինլանդիա խաղից առաջ մասնագետների մեծ մասը նախապատվությունը տալիս էր ֆիններ հոկեյիստներին, սակայն չեխերը խաղով ապացուցեցին իրենց գերազանցությունը: Չեխիայի թիմը հաղթեց 3-0 հաշվով:

Նագանոյում ԱՄՆ-ի հավաքականի ղեկավարները հայտարարում են, որ օլիմպիադա են եկել չեմպիոնական ոսկե մեդալների եւեւից: Սակայն առաջին իսկ խաղում ամերիկացիները «սայթաքեցին»: Շվեդների հետ հանդիպման առաջին փուլից հետո նրանք հաղթում էին 2-1 հաշվով, սակայն մյուս երկուսում սկանդինավցի հոկեյիստները երեք անպատասխան գոլ խփեցին մրցակցի դարպասը եւ հաղթեցին 4-2 հաշվով:

Գեղասահքի մրցումներում ասպարեզ մտան մենասահորդները: Այստեղ օլիմպիական չեմպիոնի կոչման համար լուրջ պայքար է սպասվում, քանի որ 3-4 մարզիկներ մոտավորապես հավասար հնարավորություններ ունեն: Կարճ ծրագրի կատարումից հետո առաջատարը Ռուսաստանի ներկայացուցիչ Իլյա Կուլիկովն է: Երիտասարդ գեղասահորդը անսպասելի հանդես եկավ արժանանալով մրցավարների բարձր գնահատականներին: Հաջորդ տեղերում են Էլվիս Ստոյկոն (ԱՄՆ), Տոդ Էլդրիջը (ԱՄՆ), Ալեքսեյ Յագուդինը (Ռուսաստան):

Մենասահքի հաղթողի անունը հայտնի կդառնա այսօր:

Առաս տեղումների պատճառով մի քանի անգամ հետաձգվելուց հետո վերջապես անցկացվեցին արագընթաց վայրէջքի մրցումները:

Օլիմպիական չեմպիոնի կոչումը նվաճեց Ժան-Լուի Կրետիեն (Ֆրանսիա): Նորվեգիայի ներկայացուցիչ Լասսե Կյուսը արժանացավ արծաթե մեդալի: Բրոնզե մեդալակիր դարձավ Հանս Տրինկլը (Ավստրիա): Մեկ այլ ավստրիացի ափսարհի գավաթի խաղարկության առաջատար Հերման Մայերը, վայր ընկավ ու դուրս մնաց մրցումներից: Ընդհանուր առմամբ 15 լեռնադահուկորդներ չկարողացան ավարտել դժվարին մրցատարածությունը:

Կազմակերպիչները որոշեցին՝ քանի եղանակը լավ է, միանգամից անցկացնել արագընթաց վայրէջքի երկամարտի մրցումները: Երկու մեդալ ստացան Ավստրիայի լեռնադահուկորդները: Մարիո Ռոյթերը նվաճեց չեմպիոնի ոսկե մեդալը, իսկ Քրիստիան Մայերը դարձավ բրոնզե մեդալակիրը: Լասսե Կյուսը (Նորվեգիա), ստացավ իր երկրորդ արծաթե մեդալը:

Հյուսիսային երկամարտի (ոսկնակցաստկ եւ դահուկավազքի) մասնակիցները երեկ սկսեցին մրցապայքարը: 90 մետրանոց ոսկնակից ցատքերի երկու փորձերից հետո առջեւում է Բյորն-Էնգել Վիկը (Նորվեգիա): Շաբաթի համար անսպասելիորեն առաջատարների թվում հայտնվեց նաեւ ռուսաստանցի Վալերի Սոլյարովը, որն ընթանում է երկրորդ տեղում: Երրորդն առայժմ Ցուգիհարա Օգիվարան է (Ճապոնիա): Իհարկե, շաբաթ կորոշի այսօր անցկացվելիք 15 կմ դահուկավազքը:

Գերմանացի մարզիկներն ապացուցեցին, որ սահնակային սպորտի մրցումներում ուժեղագույնները իրենք են: Երեկ նրանք նվաճեցին այս մրցաձեւի երրորդ ոսկե մեդալը: Երկտեղանի սահնակների մրցումներում պայքարն ընթացավ ԱՄՆ-ի եւ Գերմանիայի ներկայացուցիչների միջեւ: Գերմանացիները՝ Ստեֆան Կրաուզեն ու Յան Բերենդսը, կարողացան առաջ անցնել ԱՄՆ-ի երկյակներից եւ նվաճեցին օլիմպիական չեմպիոնների տիտղոսները: Քրիս Տորոտ-Գորդեն Շիր եւ Սարկ Ռիմես-Բրայան Սարտին զույգերն արժանացան համապատասխանաբար արծաթե եւ բրոնզե մեդալների:

Առաջատարները

	երկրներ	ոսկի	արծաթ	բրոնզ
1.	Գերմանիա	5	4	4
2.	Ռուսաստան	4	3	0
3.	Նորվեգիա	3	5	3
4.	ԱՄՆ	2	1	3
5.	Ֆինլանդիա	2	1	2
6.	Կանադա	2	1	1
7.	Ճապոնիա	2	1	0
8.	Ֆրանսիա	2	0	0

Ոճիր եւ «պատիժ»

Նագանոյի օլիմպիադայում ծագեց առաջին (հուսանք՝ վերջին) դոպինգային սկանդալը: Խաղերի ծրագրում առաջին անգամ ընդգրկված սնոուբորդի հսկա ոլորավայրէջքի մրցումների հաղթող Ռոսս Ռեբագլիոտիի օրգանիզմում մարիխուանա հայտնաբերվեց: ՄՕԿ-ի գործկոմի արտահերթ նիստում կարծիքները բաժանվեցին: Ի վերջո 3 կողմ, 2 դեմ, 2 ձեռնպահ քվեարկությամբ որոշվեց Կանադայի մարզիկին զրկել եւ հետ վերցնել չեմպիոնական ոսկե մեդալը: Սակայն Կանադայի ՄՕԿ-ը բողոքարկեց այդ վճիռը: Ինքը՝ 26-ամյա Ռեբագլիոտին խոստովանեց, որ իրոք մարիխուանա ծխել է, բայց հունվարի 31-ին: Հարցը բարդացավ նրանով, որ պարզվեց, որ եթե թմրանյութն օգտագործվել է ճապոնիայում, ապա, այդ երկրի օրենքին համապատասխան, Ռեբագլիոտիին նաեւ մինչեւ 7 տարի ազատազրկում է սպասվում: Սակայն ՄՕԿ-ի բարձրագույն արբիտրային դատարանը չեղյալ համարեց գործկոմի որոշումը: Արդարացման վճիռն ընդունվեց այն փաստի հիման վրա, որ մարիխուանայի քանակը աննշան է եղել: Իսկ ձեւականորեն նոպաստեց բժշկական կոդեքսի այն ձեւակերպումը, որ այդ թմրամիջոցի օգտագործման դեպքում կարող են կիրառվել պատժամիջոցներ:



Ռոսս Ռեբագլիոտին ուրախ է, որ իրեն չզրկեցին ոսկե մեդալից:

Իրենց մարզիկին արդարացնելուց հետո Կանադայի պատվիրակության ղեկավարները ցնծում էին, Ռեբագլիոտին, որը 3 օր շարունակ ոսկե մեդալը գրպանում էր պահում, անմիջապես վզից կախեց թանկարժեք պարգեւը: Շաբաթը համարում են, որ թմրանյութ օգտագործած մարզիկին արդարացնելը բոլորովին էլ չի նոպաստում սպորտի անաղարտությանը, այն հակասում է օլիմպիզմի գաղափարներին:

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սալասը կխաղա «Լացիոյում»

Հոսում է ժամանել Չիլիի հավաքականի լավագույն խաղացողներից մեկը՝ Մարսելո Սալասը: Նա հանդես կգա Իտալիայի մայրաքաղաքի «Լացիո» թիմում: Օդանավակայանում Սալասին դիմավորելու էին եկել բազմաթիվ ֆուտբոլասերներ, «Լացիոյի» ղեկավարները, որոնց թվում էր նաեւ ակումբի նախագահ, նախկինում հայտնի դարպասապահ Դինո Զոֆֆը:

Չիլիացի տաղանդավոր ֆուտբոլիստի համար իտալացիները մեծ գումար են վճարել արգենտինական «Ռիվեր Փլեյթ» ակումբին (Սալասը մինչեւ վերջին ժամանակներս հանդես էր գալիս այս թիմի կազմում):

Անգլիա-Չիլի

Իսկ որ իրոք Սալասի համար մեծ գումարներ խնայել պետք չէ, հաստատեց նաեւ «Ուեմբլիում» կայացած Անգլիա-Չիլի խաղը: Ափսարհի առաջնություն-98-ի երկու մասնակիցների հանդիպումը տխուր վախճան ունեցավ դատի տերերի համար: Սալասը երկու գոլ խփեց (մեկը՝ 11 մետրանոց տուգանայինից) եւ հաղթանակ բերեց իր թիմին:

Պարտությունից չափազանց ազդված էր Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Գլեն Հոդլը: Ընդ որում, նախորդ օրը նա Բիրմինգեմ քաղաքում հետեւել էր նաեւ այս երկու երկրների երիտասարդական հավաքականների խաղին, որտեղ նույնպես անգլիացիները պարտություն էին կրել՝ 1-2 հաշվով: Չիլիի թիմից երկու գոլն էլ խփել է փոխարինման դուրս եկած Մանուել Նեյրան:

Գուլլիտին կփոխարինի Վիալլին

Անսպասելի լուր ստացվեց Անգլիայից: Լոնդոնի «Չելսի» ակումբը փոխում է իր գլխավոր մարզչին՝ հոլանդացի հանրահայտ ֆուտբոլիստ Ռուդ Գուլլիտին: Պատճառը թիմի ցածր արդյունքները չեն. «Չելսին» առաջատարների խմբում է: Պատճառը, ինչպես ասում են ակումբի ղեկավարները, Գուլլիտի... մեծ ախորժակն է: Եկել է նոր պայմանագիր կնքելու ժամանակը, եւ Գուլլիտը, որն առանց այն էլ լավ էր վարձատրվում, ավելի մեծ գումար է պահանջել:

Ռուդ Գուլլիտը

Հոլանդացուն կփոխարինի մեկ այլ նշանավոր ֆուտբոլիստ՝ իտալացի Ջանլուկա Վիալլին, որն այժմ խաղում է «Չելսիում»: Նախատեսվում է, որ նա եւս, ինչպես մարզչական կարիերայի սկզբում Գուլլիտը, խաղացող մարզիչ կլինի:

Մարզչական աթոռմա

Այն, որ թիմի անհաջողության համար մարզչի գլուխը չեն շոյում, պարզ է բոլորին: Իտալական առաջնության բարձրագույն խմբում արդեն 6-րդ մարզիչն է հեռացվում:

Դրանցից երեքը բաժին են հասնում «Նապոլիին»: Թերեւս, դա բացատրելի է. երբեմնի ուժեղ ակումբը ընթանում է վերջին 18-րդ տեղում: Եվ մարզիչ Ջովաննի Գալեոնեն էլ չկարողացավ շտկել վիճակը:

Իր գործընկերոջ բախտին արժանացավ նաեւ «Լեչչեի» մարզիչ Չեզարե Պրանդելլին: Այս թիմը մրցաշարի նախավերջին հորիզոնականն է գրաղեցնում:

«Ալավեսը» զարմացնում է

Իսպանիայի ֆուտբոլի գավաթի խաղարկությունում շարունակում է զարմացնել երկրորդ դիվիզիոնի ներկայացուցիչ «Ալավեսը»: Նախորդ փուլերում նա հետագա պայքարից հանել էր բարձրագույն խմբում հանդես եկող «Օվյեդոյին», «Կոմպոստելային», «Ռեալին»:

Քառորդ եզրափակիչում նրանց բախտին արժանացավ նաեւ «Լա Կորուն յան»: Առաջին խաղում իր դաշտում 3-1 հաղթելուց հետո, պատասխան հանդիպման ժամանակ «Ալավեսը» կարողացավ պահպանել ձեռք բերած առավելությունը: Կիսաեզրափակիչ դուրս եկան նաեւ «Սարագոսան», որը երկու խաղի արդյունքով առավելության հասավ «Բետիսի» նկատմամբ (իր դաշտում՝ 3-0, մրցակցի դաշտում՝ 2-2): «Մալորկա»-«Ատլետիկ» զույգում թիմերից յուրաքանչյուրը հաղթանակ տարավ իր դաշտում. «Ատլետիկը»՝ 2-1, «Մալորկան» 1-0 հաշվով: Վերջինս, շնորհիվ մրցակցի դաշտում խփած գնդակի, դուրս եկավ հաջորդ փուլ:

Գավաթի ամենահեղինակավոր հավակնորդը, իհարկե, «Բարսելոնն» է: Իր դաշտում «Սեւիդայի» նկատմամբ 2-0 հաշվով առավելության հասնելուց հետո, կատալոնցիները հյուրընկալվելիս ավելի խոշոր հաշվով (3-0) հաղթանակ տարան: Գոլերից երկուսը մրցակցի դարպասը խփեց Սերխին, երրորդը, 11 մետրանոց տուգանային հարվածով.

Հաճելի նվեր մարզասերներին

Լույս տեսավ «Սոլորակ» թերթի ֆուտբոլային հավելվածի «Լիգա» շաբաթաթերթի անդրանիկ համարը:

Այն նախաձեռնել եւ խմբագրում է մարզական լրագրող, ֆուտբոլային ճանաչված վիճակագիր Աշոտ Հայրապետյանը:

«Լիգան» հարուստ է բազմաբնույթ նյութերով: Տպագրված են հարցազրույցներ հանրապետության առաջատար թիմեր «Երեւանի» եւ «Շիրակի» մարզիչների Սամվել Դարբինյանի եւ Անդրանիկ Աղամյանի, ինչպես նաեւ մեր ճանաչված խաղացողներից մեկի Երվանդ Սուքիասյանի հետ:

Համարում կարեւոր տեղ են գրավում մեր ՊՖԼ-ի նիստին, հանրապետական առաջնության անցկացման կարգին վերաբերող, ինչպես նաեւ առաջնությանը նախապատրաստվող թիմերի մասին պատմող նյութերը:

«Լիգայի» անդրանիկ համարում տեղեկություններ կան նաեւ միջազգային ֆուտբոլային կյանքի, սիրված խաղածեւի պատմության վերաբերյալ:

Եվ, վերջապես, կարծում ենք, որ ֆուտբոլասերներին կհետաքրքրի շաբաթաթերթի կազմակերպած մրցույթը:

Բարի երթ քեզ, «Լիգա»:

ԹԵՆԻՍ

Կանայք էլ կունենան իրենց գավաթը

Թենիսի միջազգային ֆեդերացիան հայտարարել է, որ այս տարի կանայք եւս, ինչպես տղամարդիկ, կոպայքարեն «Մեծ սլեմի» գավաթի համար: Այն կանցկացվի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 4-ը, Մյունխենում: Հաղթողը կստանա խոշոր դրամական 800 հազար դոլար, իսկ ընդհանուր մրցանակային հիմնադրամը 2 մլն 450 հազար դոլար կլինի:

Գավաթի խաղարկությանը մասնակցելու իրավունք կտրվի տարվա ընթացքում «Մեծ սլեմի» մրցաշարերում հաջող հանդես եկած ութ ուժեղագույն թենիսիստուհիների:

Փոփոխություններ կլինեն նաեւ տղամարդկանց մրցումներում: Հայտնի է, որ մասնակիցների թիվը 16-ից կրճատվելու է 12-ի, իսկ ընդհանուր մրցանակային հիմնադրամը 6 մլն-ից կիջնի 4 մլն 250 հազար դոլարի: Հաղթողը կստանա 1 մլն 300 հազար դոլար:

Ե՞րբ կվերադառնա Գրաֆը

Ֆրանսիայի մայրաքաղաքում սկսվել է կանանց խոշոր մրցաշար, որի մասնակիցների թվում են մի շարք ուժեղագույն թենիսիստներ:

Փարիզում խաղալու մտադրություն ուներ նաեւ ժամանակին ափսարհի թիվ 1 ռակետ Շթեֆֆի Գրաֆը: Նա նույնիսկ մարզումներ անցկացրեց «Ռոլան Գարոսի» խաղադաշտում, սակայն կրկին զգացնել տվեց մեկ տարի առաջ ստացած վնասվածքը, որի պատճառով գերմանուհի մարզուհին չի կարողանում թենիս վերադառնալ: Ընդ որում, Փարիզի մրցաշարն արդեն թվով չորրորդն էր, որտեղ Գրաֆը ցանկանում էր խաղալ: Եվ կրկին նա ստիպված է սպասել:

Մարտինա Հինգիսը իհարկե կլինի նոր գավաթի հավակնորդների թվում

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
Օրվա հետքով

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Կարեն Դեմիրճյանը խաղնում է Արեւմուտքի հաշվարկները

Վերջին իրադարձությունների շնորհիվ Հայաստանը հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Այդ իրադարձությունները դայմանավորվեցին քաղաքական ճգնաժամի առկայությամբ: Այդ ընթացքում նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը գնահատվեց որպես հեղաշրջում եւ միջազգային հանրությունը, դատճառաբանելով, թե «Հայաստանում իշխանության է եկել դատերազմի կուսակցությունը», սկսեց հայ-ադրբեջանական հակամարտության գոտում խաղաղության հեռանկարի առնչությամբ հայտնել իր մտահոգությունը: Մինչ այդ, **«Ազգը»** հունվարի 31-ի համարում անդրադառնալով վերջին իրադարձությունների միջազգային արձագանքներին, կարծիք էր հայտնել, «Արեւմուտքին ոչ թե հուզում է հակամարտության կարգավորումը, այլ կարգավորման տարբերակի ծառայեցումը Անդրկովկասից Ռուսաստանի դուրսմղման ծրագրերին»: Քանի որ անդրկովկասյան 3 հանրապետությունների ինտեգրացումը դրվում է դրանց հիմքում, ուստի եւ փուլային տարբերակով «գործող հրադադարը տեւական խաղաղության վերածելու» դատրանք է ստեղծվում, որպեսզի ապահովվի Հայաստանի ինտեգրացումը եւ նա ինտեգրացման միջոցով ներգրավվի այդ ծրագրերի մեջ: Մինչդեռ մեր հանրապետության նոր ղեկավարությունը բացասական վերաբերմունք է ցուցաբերում փուլային տարբերակին: Մերժելով այդ տարբերակը, նա փաստորեն մերժում է Հայաստանի մասնակցությունը վերոհիշյալ ծրագրերին, եւ կասկածի տակ է դնում դրանց ապագան: Թերեւս այս հանգամանքն էլ դայմանավորում է Հայաստանում իշխանության հերթափոխի նկատմամբ Արեւմուտքի վերաբերմունքը: Այսդիսով շրջանառության մեջ է դրվում «դատերազմի կուսակցության» վարկածը եւ արեւմտյան երկրները մտահոգված իրենց ծրագրերով, դա հնարամտորեն ողողարկում են «հայ-ադրբեջանական հակամարտության գոտում խաղաղության հեռանկարի նկատմամբ» իրենց այսպես կոչված մտահոգությամբ:

Հայաստանում նախագահական ընտրությունների նշանակումով վերոհիշյալ վարկածները մղվեցին ետին պլան: Սակայն Արեւմուտքն այս անգամ էլ իր ուշադրությունը բեւեռեց առաջիկա ընտրությունների վրա, նրա մտահոգությունը «խաղաղության հեռանկարի» հարթությունից տեղափոխվեց ընտրությունների հարթություն: Դրան հետեւեցին չարաբաստիկ կանխատեսումները, թե «ընտրական նոր խարդախությունները կխարխլեն Հայաստանի արդեն իսկ երերացող ժողովրդավարությունը»: Այդ ընթացքում անխնա շահարկվեց վարչապետ Քոչարյանի դարաբաղյան ծագումը: Ըստ երեւույթին Արեւմուտքի հաշվարկներով առաջիկա նախագահական ընտրություններում Քոչարյանի հաղթանակի հնարավորությունները մյուս թեկնածուների նկատմամբ անհամեմատ մեծ են: Ուշագրավը, սակայն սոսկ հնարավորությունները չեն, այլ նրան Թուրքիայի բշնամիների հետ նույնացնելու թուրքական «Հյուրրիյեթի» սանձարձակությունն է: Թերեւս այդ առումով ավելի քան ուշագրավ է թերթի կողմից Թուրքիայի ղեկավարների եւ արտգործնախարարության հեգնանքով շնորհավորումը, թե վերջիններս չկարողացան կանխել իրադարձությունների համանման ընթացքը Հայաստանում:

Թվում է, թե առաջիկա ընտրություններում Կարեն Դեմիրճյանի նախագահական թեկնածու առաջադրումը ոչ միայն խախտում է Արեւմուտքի հաշվարկները, այլեւ հեգնանքի նոր հնարավորություններ է տալիս «Հյուրրիյեթին»: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Արեւմուտքն այս անգամ կսկսի շահարկել Դեմիրճյանի կոմունիստական ծագումը, «մտահոգության» համադասխան դրսեւորումներով: Սակայն այդ մտահոգությունը ողողարկել այսպես կոչված խաղաղության հեռանկարով ըստ երեւույթին Արեւմուտքին չի հաջողվելու: Դեռ հայտնի չէ դարաբաղյան հիմնահարցի կարգավորման Կարեն Դեմիրճյանի ծրագիրը: Սակայն նախագահական ընտրություններում նրա թեկնածության առաջադրումն ինքնին Հայաստանում Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացման կողմնակիցների ակտիվության վկայությունն է: Սա լուրջ տեղաշարժ է, հագիվ թե դրականորեն անդրադառնա Անդրկովկասում Արեւմուտքի ծրագրերի, առավել եւս այդ ծրագրերին Հայաստանի մասնակցության կամ նվազագույն կարոտյցների հետ նրա ինտեգրացման վրա:

ՀԱՅՈՐ ՉԱԲԲՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

Գլխավոր դատախազը չի բացառում նախկին իշխանությունների կապը հանցագործ խմբերի հետ

Սկիզբը էջ 1

Խոսելով մամսային վարչության դեմից, լրագրողներին ասաց, թե ինչու չեն հրադարակում, որ Իրական օրենսգրքի 137 հոդվածով մամսային վարչության դեմի նկատմամբ դատախազությունը Իրական գործ է հարուցել, նշելով, թե ժամանակին բոլորը նրա դեմ էին գրում, իսկ ներկայումս զարմանալիորեն լռում են: «Օրենքով մեր լիազորությունների սահմաններում կհասնենք արդյունքի, ոչ մեկը օրենքից դուրս չէ, անկախ ծագումից, զբաղեցրած դաշտոնից: Ես կհասնեմ արդյունքի եւ ավելին», ընդգծեց դատախազը:

Խոսելով ներիշխանական իրավիճակից, դատախազը նշեց, որ նախագահի հրաժարականը Սահմանադրության համաձայն է եղել, Աժ-ը գործել է սահմանադրորեն, իսկ Ռոբերտ Քոչարյանի նախագահի թեկնածու առաջադրվելու վերաբերյալ՝ «այլ բան է առաջադրելը, իսկ ինչ վերաբերում է գրանցվելուն, դա կարող է միայն Գերագույն դատարանում վիճարկվել», նկատեց դատախազը:

Այս օրերին հասարակության ուշադրության կենտրոնում է նաեւ Հոկտեմբերյանի զորամասում կատարված զինվորների սպանության դեպքը, որի վերաբերյալ դատախազն ասաց. «Խորը դատաքննություն է կատարվում, եւ բացառված չէ, որ վիրավորներից մեկը, որը կենդանի է մնացել, ուշքի գա եւ Իրական դատապահանատվության ենթարկվի: Ինքնասպանը շատ խելացի, կարդացած անձնավորություն էր, որեւէ մեկը չհամարձակվի ասել, որ նա խախտում է ունեցել, բայց թե ինչ է կատարվել՝ քննությամբ կպարզվի: Կրկնում եմ, անմիջական հրամանատարները, ղեկավարները նույնպես դեմք է դատասխան տան: Սա աղետ է»: Դատախազը հերքեց, թե նա 2 տարի խուսափել է ծառայությունից:

Մեր այն հարցին, թե Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի՝ ԱՍՍԱԼԱ-ի անդամներ Դավիթ Դավիթյանի եւ Աբրահամ Խամիսյանի սպանության գործի քննությունն ի՞նչ փուլում է, դրն խաչատրյանը տեղեկացրեց, որ 2 սպանություններն էլ կատարվել են նույն զենքով եւ ենթադրաբար՝ միեւնույն մարդկանց կողմից: Ցավով նշեց, որ քննության ընթացքում լուրջ տեղաշարժեր չկան, քանի որ օպերատիվ հետախուզական ծառայության կողմից մեծ աշխատանք է դահանջվում:

Խոսելով Ռոմեն Ղազարյանից, նշվեց, որ գործի առնչությամբ նշանակվել է կրկնակի փորձաքննություն, հանցագործությունը բացահայտվում է, դարզվում են շարժառիթները, հատակ հավատալով, որ մահափորձի մասին խոսք լինել չի կարող: «Գործով Ռոմեն Ղազարյանը տուժող է եւ այն հրադարակումները, թե ինչու նրանից ստորագրություն չեն վերցրել քաղաքից չբացակայելու համար, բացարձակ անգրագիտություն է, քանի որ նա տուժող է: Կփոխվի կարգավիճակը, այնժամ կմտածենք: Եթե քննությամբ հիմնավորվեց, որ իմիտացիա է, դեմք է հատակ դատասխան տալ: Վաղուց Հայաստանից բացակայող մեկին Մոսկվայից բերելու կալանքի սանկցիա եմ ստորագրել, որի հետ կապված շատ բան կբացահայտվի», տեղեկացրեց դատախազը:

Խոսելով Արմեն Սահակյանի 25 հոգանոց բանդայի մասին, դատախազն ասաց, որ «երեկ ստորագրել եմ եւս 3 անձի կալանավորելու սանկցիա, քանի որ քննությամբ լուրջ տեղաշարժեր կան եւ կատարված սպանությունները տեսադաշտից դուրս չեն լինելու (նկատի ունենալով Ղանդիլյանի, Աշտարակի գործկոմի նախագահի, Յուզբաշյանի, Համբարձումի Գալստյանի սպանությունները-Ա. Ս.): Քննությունը ցույց է տալիս, որ գործ ունենք շատ լուրջ կազմակերպված հանցագործ խմբերի հետ, ընդ որում հովանավորված», հավատաց դատախազը, միաժամանակ չբացառեց, որ խմբի հետ կարող ունեն նաեւ նախկին իշխանությունները, ինչը կպարզվի գործի հետագա քննությամբ:

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Ու. Քոհեն. «ԱՄՆ-ը Իրաքի նավթի կարիքը չունի»

ՄՈՍԿՎԱ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի դատշտանության նախարար Ուիլյամ Քոհենը մոսկվայում հավատել է, որ Միացյալ Նահանգները որոշել է Իրաքին հատվելիք հարվածների թիրախները, սակայն ասել է, որ ռազմական գործողության օրը ճշված չէ, եւ Վաշինգտոնը դիվանագիտական լուծման հույս ունի:

Ելույթ ունենալով ՆՏՎ հեռուստաալիքով՝ Ուիլյամ Քոհենն ասել է, որ Պենտագոնը «շատ հանգամանորեն եւ զգուշությամբ է մոտենում թիրախների որոշմանը (Իրաքին հարվածներ հասցնելու համար), որպեսզի առավելագույն չափով նվազեցվի քաղաքացիական բնակչության հնարավոր վնասը»:

ՌՈՅԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ուիլյամ Քոհենը հայտարարեց նշել է, որ «ԱՄՆ-ը Իրաքի նավթի կարիքը չունի»: «ԱՄՆ-ում կա բավականաչափ նավթի արտադրություն իր բարեկեցության համար, ասել է նա: Փաստն այն է, որ նավթը անվտանգություն է ապահովում արդյունաբերապես զարգացած շատ երկրների համար: Նրանցից շատերը կախված են Պարսից ծոցի նավթից, ուստիեւ ԱՄՆ-ը դահդանում է իր ներկայությունն այս տարածաշրջանում, ապահովելու համար կադի կամուրջ ու նավթի առաքումը աշխարհի արդյունաբերապես զարգացած այլ երկրներ»:

ԱՄՆ-ի դեսդարտադարը կոչ է անում վերացնել 907 բանաձեւը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամերիկայի հայկական ասամբլեան Վաշինգտոնից հաղորդում է, որ Միացյալ Նահանգների դեսդարտադար Մադլեն Օլբրայթը, փետրվարի 10-ին ելույթ ունենալով Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեում, հայտարարել է, թե Լեռնային Դարաբաղի հակամարտությունը լուծելու համար հարկավոր է վերացնել 907 բանաձեւը, որը Միացյալ Նահանգների կառավարությանն արգելում է ուղղակի օգնություն տրամադրել Ադրբեջանի կառավարությանը, քանի դեռ նա չի վերացրել Հայաստանի եւ Լեռնային Դարաբաղի անօրինական շրջափակումը:

«Չնայած զինադադարը դահդանվում է, հակամարտության կարգավորման խնդրում որեւէ առաջխաղացում չկա: Միացյալ Նահանգները էական շահեր ունի այդ տարածաշրջանում, եւ մեր լծակները ավելի կիզորանան, եթե Կոնգրեսը չեղյալ հայտարարի 907 բանաձեւը», ասել է Օլբրայթը:

Անցյալ տարվա նոյեմբերին Կոնգրեսը տեղի չտվեց վարչակազմի եւ ԱՄՆ-ի նավթային ընկերությունների ճնշմանը եւ վերստին հաստատեց 907 բանաձեւը: Ամերիկայի հայկական ասամբլեայի գործադիր տնօրեն Ռոս Վարդյանը դեսդարտադարի հայտարարությունը համարեց «անընդունելի»: «Ադրբեջանի կողմից կիրառվող շրջափակումն անօրինական է: Դրա հետեւանքով Հայաստանը եւ Լեռնային Դարաբաղը մեծ դժվարություններ են կրում, մեռնում են մարդիկ, քայքայվում է տնտեսությունը: Ինչդե՞ս դեսդարտադարը կարող է կոչ անել վերացնելու այդ բանաձեւը, երբ Ադրբեջանը ոչ մի քայլ չի արել շրջափակումը վերացնելու համար», ասել է Վարդյանը:

Մեկնաբանելով դեսդարտադարի այդ կոչը, նա այն միտքն է հայտնել, որ հակամարտության կարգավորման խնդրին ԱՄՆ-ի վարչակազմի մոտեցումը դայմանավորված է ամերիկյան նավթաընկերությունների շահերով: Հակամարտության կարգավորմանը նպաստակամղված Միացյալ Նահանգների ծրագիրը միակողմանի զիջումներ է դահանջում Հայաստանից հօգուտ Ադրբեջանի, նշել է Վարդյանը:

Լիզա Ճաղարյանը՝ «Հայաստանի Հանրապետության» գլխավոր խմբագիր

ԵՐԵՎԱՆ, 13 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի որոշմամբ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր է նշանակվել Լիզա Ճաղարյանը, որ մինչ այդ աշխատում էր իբրեւ «ՀՀ»-ի գլխավոր խմբագրի տեղակալ:

Նոյեմբերյան. Թերթ «Քարե» անունով

13 ՓԵՏՐՎԱՐ, «ԵՐԵՎԱՆ»: Փետրվարի 12-ին լույս տեսավ Նոյեմբերյանի քաղաքապետարանի «Քարե» դաշտոնաթերթի անդրանիկ համարը: Այս անունը՝ որպես Նոյեմբերյանի հին անվանման՝ Բարանայի արմատ է նշվում եւ ստուգաբանվում բերք, բարիք, բարություն նշանակությամբ: Քաղաքապետարանի ֆինանսավորմամբ, թերթը կտպագրվի ամեն հինգշաբթի:

ԴՈՒՔ ՆՈՐԻՑ
կարող եք
նիհարել դիետային
չհետեւելով:
Հերթագրվեք հետեւյալ
հեռախոսահամարով
58-40-94

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
36x7,5x15 մ չափսերով երկաթե ֆանդվող անգար, որը կարելի է օգտագործել որպես դահեստ, արտադրամաս, ինչդես նաեւ այլ նդատակներով: Անգարը տեղադրված է Երեբունու շրջանի Ջրաշեն գյուղում: Գինը՝ 2000 դոլար:
Հեռախոս 23-41-03, 57-42-46

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան
(Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան
Նորքի V զանգ.,
հեռ. 64-93-89, 64-88-85

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան,
Ֆրունզեի փ. շենք 6, 34 բն., 5
հարկանի շենքի 5-րդ հարկում:
Հեռ.՝ 44-97-40, 58-18-41
(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ)

«ԱՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան 73, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասալ 69149. Պատվեր 760. Տպաքանակը 3500. Ստորագրված է տպագրության 13.02.1998. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@